ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

ՄԱՍ Ի

Երևանի քաղաքապետի զեկույցը 2024 թվականի Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղությունների մասին

Հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2024-2029 թվականների հնգամյա և Երևան քաղաքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրերով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները, Երևան քաղաքի 2024 թվականի ծրագրի առաջնահերթությունները, 2023 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը, հաշվի առնելով գլխավոր հատակագծի պահանջների համատեքստում Երևան քաղաքի նկարագիրը պահելու առաջնահերթությունները, Երևան քաղաքի զարգացման հիմնական ուղղություններում առաջնահերթ և գերակա են համարվելու այն նոր և շարունակական ծրագրերը, որոնք միտված են լինելու մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացմանը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականության ապահովմանը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացմանը, բնակչության կենսական շահերի ապահովմանը:

Երևան քաղաքի 2024 թվականի համար նախանշված ծրագրերի իրականացումը հիմնված է համաչափ զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության շարունակական բարելավումը, քաղաքապետարանի գործունեության թափանցիկությունն ու բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային և կանաչ տարածքների պահպանումը, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:

3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Քաղաքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:
5. Մայրաքաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավումը:
6. Երևան քաղաքի հանրային տրանսպորտային համակարգի ամբողջական արդիականացման շարունակական ապահովումն ու կառավարման ժամանակակից համակարգերի ներդրումը:
7. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների և բնակիչների միջև համագործակցային կապի ամրապնդումն ու գործունեության թափանցիկության ապահովումը:
8. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
9. Երևան քաղաքում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
10. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում, մշակույթի բոլոր ճյուղերում հասարակության ներգրավվածության ու հետաքրքրության ապահովում:
11. Երևան քաղաքում Էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրերի ապահովումը:
12. Երևանի և այլ քաղաքների միջև գործնական կապերի հաստատումն ու պահպանումը, ինչպես նաև տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը:
13. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:

14. Հանգստի գոտիների ստեղծումը, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացումը:
15. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:
16. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
17. Երեխաների և սոցիալական պաշտպանության համակարգի աշխատանքների արդյունավետության բարձրացում՝ համայնքային սոցիալական ծառայությունների ներդրման միջոցով:
18. Երևանի գլխավոր հատակագծի նախագծի մշակումը:
19. Երևան քաղաքի ճանապարհափողոցային ցանցի զարգացում և բարելավում:
20. Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման լիարժեք մատչելիության ապահովում:
21. Վերելակային տնտեսության շարունակական արդիականացումը:
22. Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, մուտքերի, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովումը:
23. Երևան քաղաքի ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատար համակարգերի ընդլայնում և գործող ինժեներական ենթակառուցվածքների արդիականացումը:
24. Երևան քաղաքի լուսացուցային տնտեսության արդիականացումն ու նոր լուծումների ներդրումը:
25. Զբոսաշրջության զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացումը և Երևանի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
26. Ապահովել Երևան քաղաքի փողոցների, բակային տարածքների, հուշարձանների, պուրակների, պատմամշակութային արժեք ունեցող շենքերի արտաքին լուսավորությունը:

27. Պայքար մթնոլորտային օդի աղտոտման դեմ, օդի որակի մոնիթորինգի արդիական համակարգի ստեղծումը:
28. Առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը:
29. Սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումն ու վերազինումը:
30. Զբաղվածության ծրագրերի կազմակերպում և իրականացում բոլոր խոցելի խմբերի համար:
31. Արտադպրոցական ուսուցմանն ու մշակութային կրթության ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացում, ոլորտի ենթակառուցվածքների շարունակական զարգացման ապահովում:

ՄԱՍ II

Բացատրագիր-Հիմնավորում

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծի

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագիծը կազմվել է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքների պահանջներին համապատասխան, որի ձևավորման հիմքում ընկած են խնայողականությունը, հաշվեկշռվածությունը, արդյունավետությունը, հավաստիությունը, հստակությունը և թափանցիկությունը:

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեն կանխատեսվում է՝

եկամուտների գծով՝ ***124,639,373.4*** *հազ. դրամ,*

ծախսերի գծով՝ ***124,917,826.1*** *հազ. դրամ,*

դեֆիցիտը՝ ***278,452.7*** *հազ. դրամ:*

1. Եկամուտների կանխատեսում.

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը նախատեսվել է 124,639,373.4 հազ. դրամ: Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեն ի սկզբանե հաստատվել է 105,103,316.5 հազ. դրամ, ճշտված բյուջեն 118,856,806.2 հազ. դրամ, իսկ 2022 թվականի փաստացի ցուցանիշը կազմել է 86,187,243.1 հազ. դրամ: Նախատեսված եկամուտները ավելացել են 2023 թվականի հաստատված նույն ցուցանիշի նկատմամբ 19,536,056.9 հազ. դրամով կամ 18.59%-ով, իսկ ճշտված ցուցանիշի նկատմամբ՝ 5,782,567.2 հազ. դրամով կամ 4.87%-ով:

Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 61,514,335.1 հազ. դրամ՝ 2023 թվականի նախատեսվածից 22,714,396.4 հազ. դրամով կամ 58.54%-ով ավելի, իսկ 2022

թվականի փաստացի սեփական եկամուտներից՝ 26,117,895.5 հազ. դրամով կամ 73.79%-ով ավելի: Ըստ էության, կարելի է արձանագրել, որ Երևան քաղաքի սեփական եկամուտների աճի դինամիկան պահպանվում է, մասնավորապես, 2020 թվականից ի վեր նշված ցուցանիշը աճել է 34,494,085.5 հազ. դրամով կամ 127.66%-ով: Ստորև գծապատկեր 1.1-ով ներկայացվում է Երևան քաղաքի սեփական եկամուտների աճման դինամիկան սկսած 2020 թվականից:



Գծապատկեր 1.1- Երևան քաղաքի սեփական եկամուտների դինամիկան 2020-2024 թվականներին.

Նախագծով նախատեսված եկամուտների հիմնավորումը և համեմատական վերլուծությունը առավել հստակ կլինի դրանք առանձին եկամտատեսակների տեսքով ներկայացման պարագայում: Մասնավորապես.

1.1) Հարկեր և տուրքեր.

Հարկերի և տուրքերի գծով եկամուտը ծրագրվել է 38,898,843.5 հազ.դրամի չափով, 2023 թվականի համար հաստատված ցուցանիշից 10,691,460.4 հազ.

դրամով կամ 37.90 %-ով, իսկ ճշտված ցուցանիշի նկատմամբ՝ 10,341,460.3 հազ. դրամով կամ 36.21%-ով ավել:

Հարկային եկամուտները ծրագրվել են 26,745,015.9 հազ. դրամի չափով կամ 2023 թվականի համար հաստատված ցուցանիշից 2,262,165.3 հազ. դրամով կամ 9.24 %-ով ավել, ընդ որում ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառման արդյունքում հարկային եկամուտների կազմում հիմնական աճը նախատեսվում է անշարժ գույքի մասով եկամտատեսակից, որից.

- Անշարժ գույքից գույքային հարկերը նախագծով նախատեսվել է 13,449,309.5 հազ. դրամ կամ 2023 թվականի համար հաստատված ցուցանիշից 1,716,178.8 հազ. դրամով ավելի, իսկ 2022 թվականի փաստացի ցուցանիշից 5,542,576.7 հազ. դրամով կամ շուրջ 70.1%–ով ավելի:
- Փոխադրամիջոցի գույքահարկի գծով նախատեսվում է հավաքագրել 13,295,706.4 հազ. դրամ, 2023 թվականի բյուջեով հաստատված 12,749,719.9 հազ. դրամի դիմաց կամ 545,986.5 հազ. դրամով ավել, իսկ 2022 թվականի փաստացի հավաքագրված գումարից 2,462,602.8 հազ. դրամով կամ 22.73 %-ով:

Տեղական տուրքերի գծով 2024 թվականին ծրագրվել են 11,569,619.0 հազ. դրամի մուտքեր, 2023 թվականին նախատեսված 3,224,532.5 հազ. դրամի դիմաց կամ 8,345,086.5 հազ. դրամով ավել, մասնավորապես, որոշակի ավելացումը այս մասով պայմանավորված է մի քանի տեղական տուրքերի նախատեսվող հավաքագրումների փոփոխությամբ՝ այդ թվում նաև նվազմամբ, ընդ որում ավելացումը մեծամասամբ պայմանավորված է համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման), սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում, խանութներում և կրպակներում

հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի, համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու, համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին), ժամը 24:00-ից հետո աշխատելու, համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվությունների համար վճարվող տուրքերի ավելացմամբ:

Տեղական տուրքերի կազմում համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 2024 թվականի բյուջեի նախագծով կանխատեսվել է 1,752,800.0 հազ. դրամ՝ 2023 թվականին նախատեսված 1,434,000 հազ. դրամից 318,800.0 հազ. դրամով կամ 22.2%-ով ավել:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը 2024 թվականի համար նախագծով ծրագրվել են 584,208.6 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված ցուցանիշից 84,208.6 հազ. դրամով ավել, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 100,000.0 հազ. դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 484,208.6 հազ. դրամ:

1.2) Պաշտոնական դրամաշնորհներ.

Հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշները՝ նախագծով ծրագրվել են 15,825,186.7 հազ. դրամի

չափով պաշտոնական դրամաշնորհներ, 2023 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 6,694,912.6 հազ. դրամով կամ 29.73%-ով պակաս: Ընդ որում.

- Կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար նախատեսվել է 454,222.3 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 64,816.9 հազ. դրամով կամ 16.65%-ով ավել, որը նախատեսում է Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում ստացվող դրամաշնորհը:
- ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիան նախատեսվել է 8,436,821.9 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 4,993,533.2 հազ.դրամի չափով կամ 37.18%-ով պակաս:
- Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաների գծով նախատեսվել է 5,700,000.0 հազ.դրամ:
- Պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաների) գծով նախատեսվել է 834,142.5 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 5,763,995.0 հազ. դրամով կամ 87.36%-ով պակաս (ծրագրերի ցանկը կցվում է):
- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) գծով նախատեսվել են 400,000.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 326,701.3 հազ. դրամով կամ 44.96%-ով պակաս:

1.3) Այլ եկամուտներ.

Այլ եկամուտները 2024 թվականի նախագծով ծրագրվել են 69,915,343.1 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեով նախատեսված 54,375,834.1 հազ. դրամի դիմաց, ինչը ցույց է տալիս, որ 2023 թվականի հաստատված

ցուցանիշի նկատմամբ եկամուտը ավելացել է՝ 15,539,509.0 հազ. դրամով կամ 28.58%-ով, որից.

- շահաբաժինների գծով 2024 թվականին ծրագրվել է 135,405.9 հազ. դրամ, 2023 թվականին նախատեսված ցուցանիշից 41,678.6 հազ. դրամով կամ 44.47%-ով ավել: Հաշվարկը կատարվել է՝ հիմք ընդունելով համայնքային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները և կանխատեսումները, ինչպես նաև Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի մարտի 18-ի N 69-Ա որոշմամբ հաստատված կարգի դրույթները,
- համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարները ծրագրվել են 1,732,571.1 հազ. դրամ, 2023 թվականին նախատեսված 1,347,933.8 հազ. դրամի դիմաց կամ 384,637.3 հազ. դրամով (28.54%-ով) ավել,
- համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները ծրագրվել են 137,662.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 38,904.0 հազ. դրամով կամ 22.03%-ով պակաս,
- այլ գույքի վարձակալությունից մուտքերը ներառում են՝ համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (բացառությամբ՝ հողերի) վարձակալության տրամադրման դիմաց գանձվող վարձավճարները, որի գծով եկամուտները ծրագրվել են՝ 322,200.0 հազ. դրամ, 2023 թվականի նախատեսված 323,908.4 հազ. դրամի դիմաց, կամ, որ նույնն է 0.53%-ով պակաս:
- պետության կողմից՝ կրթության, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, կամավոր ատեստավորման և մասնագիտական զարգացման ու վարձատրության փոխկապակցված նոր համակարգի ներդրման, Երևանի մետրոպոլիտենի կառավարման, վերակառուցման,

ենթակառուցվածքների նորոգման, ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենի կայարանների կառուցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, Երևանի քաղաքային լուսավորության և Երևանի էներգաարդյունավետության ծրագրերի իրականացման, Երևանի քաղաքային զարգացման և մի շարք այլ ծրագրերի իրականացման նպատակով (ցանկը կցվում է)՝ Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման համար՝ պետական բյուջեից ստացվող միջոցները 2024 թվականի համար ծրագրվել են 47,299,851.6 հազ. դրամ, 2023 թվականին հաստատված 43,783,278.5 հազ. դրամի դիմաց՝ 3,516,573.1 հազ. դրամով կամ 8.03%-ով ավել,

- տեղական վճարների գծով ծրագրվել է 18,190,182.5 հազ. դրամ, 2023 թվականի 6,352,149.8 հազ. դրամի համեմատ՝ 11,838,032.7 հազ. դրամով կամ 186.36%-ով ավել: Տեղական վճարների գծով նախատեսված ցուցանիշը ներառում է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի դեկտեմբերի 9-ի «Երևան քաղաքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճարի դրույքաչափերը սահմանելու մասին» N 347-Ն որոշմամբ սահմանված և 2012 թվականից կիրառվող աղբահանության վճարը, որը ծրագրվել է 4,189,339.6 հազ. դրամի չափով՝ 2023 թվականի նույն ցուցանիշից 60,832.3 հազ. դրամով կամ 1.47%-ով ավել, ինչպես նաև համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ 1000.0 հազ. դրամ, համայնքի տարածքում ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո՝ ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար և

շահագործման թույլտվության ձևակերպման համար ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը՝ 145,000.0 հազ. դրամ: Համայնքի կողմից մրցույթների և աճուրդների կազմակերպման հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճարների գծով ծրագրվել է 700.0 հազ. դրամի մուտքեր: Միաժամանակ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո արդեն իսկ տեղական վճար համարվող ավտոտրանսպորտային միջոցները ավտոկայատեղիում կայանելու համար ծրագրվել է 1,360,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար նախատեսվել է՝ 50,000.0 հազ. դրամ, համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ 622,558.0 հազ. դրամ, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու համայնքային սեփականության թանգարանների մուտքի համար՝ 45,500.0 հազ. դրամ, 2023 թվականի նույն ցուցանիշից 30,500.0 հազ. դրամով կամ 203.33%-ով ավել, հաշվի առնելով 2023 թվականի փաստացի ցուցանիշները, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ 1,779.7 հազ. դրամ, անասնաբույժի ծառայության դիմաց վճարի համար՝ 1,000.0 հազ. դրամ, համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ 13,650.0 հազ. դրամ, այլ տեղական վճարների համար՝ 11,759,655.2 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 11,614,655.2 հազ. դրամով ավել, որի գերակշիռ մասը կազմում է նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու կամ դրա

փոփոխության կատարելու համար, 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և բնակելի նպատակային նշանակության շենքերի և շինությունների ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման, ինժեներական ենթակառուցվածքների (վերգետնյա և(կամ) ստորգետնյա) ստեղծման (մոնտաժման, վերանորոգման, վերականգնման և այլն) նպատակով շինարարության թույլտվության, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության, դրանց ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացների վերաբերյալ հանրային լսումների կազմակերպման վճարները, ինչպես նաև Երևան համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի փոխանակության, նպատակային և (կամ) գործառնական նշանակության փոփոխության, սահմանների ճշտման և շինությունների գործառնական նշանակության փոփոխության դեպքերում փաստաթղթերի(փաթեթի) նախապատրաստումը:

- ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման համար վճարների գծով ծրագրվել է 600,000.0 հազ. դրամ՝ 2023 թվականին ծրագրված ցուցանիշից 390,000.0 հազ. դրամով պակաս:
- վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտների գծով նախատեսվել է 569,900.0 հազ. դրամ՝ այդ թվում ավտոկայանատեղի վճարի չվճարման սահմանված դեպքերում նախատեսվող պատասխանատվության միջոցների կիրառումից մուտքերը, նախորդ տարվա 572,700.0 հազ. դրամի դիմաց,
- մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից եկամուտի գծով նախատեսվել է 13,000.0 հազ. դրամ:

- Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի իրացումից և դրամական միջոցներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքերի գծով նախատեսվել է 4,550.0 հազ.դրամ:
- համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցման գծով կանխատեսվում է 15,000.0 հազ.դրամի չափով եկամուտ:
- օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով ծրագրվել է 895,020.0 հազ. դրամ՝ 2023 թվականի բյուջեով նախատեսված 711,020.0 հազ. դրամի դիմաց:
- նախատեսվում է նաև 16,936,171.8 հազ. դրամի չափով վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացում՝ կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Ամփոփելով, Երևան քաղաքի 2024 թվական բյուջեի նախագծով առաջարկվող եկամտային մասը՝ ներկայացվում է 2024 թվականի ընդամենը եկամուտների վերլուծությունը՝ գծապատկեր 1.3.1-ով ըստ առանձին խմբերի տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, և միաժամանակ, սեփական եկամուտների բացվածքը տեսակարար կշռի վերծանման սկզբունքով՝ պատկերվել է գծապատկեր 1.3.2-ում:



Գծապատկեր 1.3.1- Երևան քաղաքի 2024թ. բյուջեի ընդամենը եկամուտների տեսակարար կշիռը



Գծապատկեր 1.3.2- Երևան քաղաքի 2024թ. բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը

2. Ծախսերի կանխատեսում.

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 124,917,826.1 հազ. դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի շուրջ 85.5%-ը կամ 106,833,979.3 հազ. դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), 24,745,853.4 հազ. դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), որից 16,936,171.8 հազ. դրամը հատկացվել է վարչական մասից, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով մուտքերի գումարը կազմում է 6,662,006.6 հազ. դրամ: Նախագծի ծախսային մասը պակաս է 2023 թվականի ճշտված բյուջեի նկատմամբ 4,961,163.4 հազ. դրամով, իսկ 2023 թվականի հաստատված բյուջեի ծախսային մասից ավել է 19,381,906.7 հազ. դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2024 թվականի Երևան քաղաքի սեփական եկամուտների ավելացմամբ:

Երևան համայնքի 2024 թվականի բյուջեի նախագծով խոշոր կապիտալ ելքերից են հանդիսանում կամուրջների կառուցման և հիմնանորոգման, թեքահարթակների կառուցման, ինչպես նաև նախադպրոցական հաստատությունների կառուցման և հիմնանորոգման աշխատանքները (*տե՛ս. Գծապատկեր 2.1, 2.2, 2.3):*



Գծապատկեր 2.1- Երևան քաղաքում կամուրջների կառուցման և հիմնանորոգման դինամիկան՝ 2020-2024 թվականների ցուցանիշների հիման վրա.



Գծապատկեր 2.2- Երևան քաղաքում թեքահարթակների կառուցման դինամիկան՝ 2020-2024 թվականների ցուցանիշների հիման վրա.



Գծապատկեր 2.3- Երևան քաղաքում նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգմանն ուղղված ծախսերը՝ 2020-2024 թվականներին.

Ստորև ներկայացվում է որոշ կապիտալ բնույթ աշխատանքների, մասնավորապես, «Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում», «Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում», «Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում», որոնց մասով կից ներկայացվում է համեմատական վերլուծություն՝ Գծապատկեր 2.4:



Գծապատկեր 2.4- Երևան քաղաքում հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցմանն ու պահպանմանն ուղղված ծախսերը՝ 2020-2024 թվականներին.



Գծապատկեր 2.5- Երևան քաղաքում բակային տարածքների և խաղահրապարակների նորոգմանն ու հիմնանորոգմանն ուղղված ծախսերը՝ 2020-2024 թվականներին.



Գծապատկեր 2.6- Երևան քաղաքում փողոցների, հրապարակների և այգիների կահավորման ծախսերը՝ 2020-2024 թվականներին.

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալներում սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն) ծախսերի տեսակարար կշիռը կազմում է 35.9%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 26.6%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 8.7%:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծի՝ բյուջետային գործառական դասակարգման տեսակարար կշիռը՝ ընդամենը ծախսերի կազմում *(տե՛ս. Գծապատկեր 2.7):*



Գծապատկեր 2.7- Երևան քաղաքի 2024թ. բյուջեի գործառական դասակարգման ցուցանիշների տեսակարար կշիռը Երևան քաղաքի 2024թ. բյուջեի նկատմամբ.

Նախագծով նախատեսվել է պահուստային ֆոնդ 25,484,627.7 հազ. դրամի չափով, որից 24,384,627.7 հազ. դրամը վարչական մասը (վարչական

եկամուտների 19.7%–ը), իսկ 1,100,000.0 հազ. դրամը ֆոնդային մասը, իսկ հատկացումը պահուստային ֆոնդի վարչական մասից՝ ֆոնդային բյուջե, կազմում է 16,936,171.8 հազ. դրամ: Վարչական մասի պահուստային ֆոնդից 4,754,856.8 հազ. դրամը նախագծով նախատեսվում է հատկացնել՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ցուցանիշը, որպես պատվիրակված լիազորություն «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլի (մանկապարտեզների և այլ հանրային շենքերի էներգարդյունավետվության բարելավում) վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարմանը, որոնց շրջանակներում նախատեսվում են շինարարական աշխատանքներ իրականացնել թվով 19 նախադպրոցական հաստատություններում՝ հ.17, հ.39, հ.33, հ.46, հ.56, հ.72, հ.75, հ.78, հ.83, հ.93, հ.100, հ.101, հ.102, հ.103, հ.108, հ.118, հ.129, հ.133, հ.157 մսուր-մանկապարտեզներ, իսկ վարչական մասի տարբերությունը՝ 2,233,599.1 հազ. դրամը և ֆոնդային մասի՝ 1,100,000.0 հազ. դրամը, 2024 թվականի բյուջետային տարում կբաշխվի ըստ ծախսային առաջնահերթությունների և գերակայությունների:

Նշված ծրագիրը նախատեսվել է պահուստային ֆոնդից հատկացման ձևով՝ ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով նախատեսված՝ պահուստային ֆոնդի վարչական մասի նախատեսման նվազագույն սահմանաչափի պահպանման նպատակով:

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծով ծրագրվող ծախսերի սկզբունքներն ու հիմնավորումները՝ ըստ ծրագրերի.

<u>Կառավարման մարմնի պահպանում</u> ծրագրով ծախսերը նախագծում ծրագրվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության (ներառյալ փոփոխությունները) պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան

քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները: Այս ծրագրով նախագծում ծախսեր են նախատեսվել 11,117,490.8 հազ. դրամ կամ ընդհանուր ծախսերի շուրջ 8.89%–ը, ինչը 2023 թվականի հաստատված համապատասխան ցուցանիշից ավել է 733,573.9 հազ. դրամով: Նշված ծրագրով նախատեսված ծախսերում էական տեսակարար կշիռ է կազմում ***աշխատավարձի ֆոնդը***՝ 8,100,096.5 հազ. դրամ: Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը իրականացվել է բյուջետայի գործընթացի շրջանակներում՝ հաստիքացուցակի հիման վրա: Հաստիքացուցակով նախատեսված 2009.5 հաստիքից նշված ծախսային հոդվածին բաժին է ընկնում թվով 1992.5 հաստիքներ (առանց պատվիրակված լիազորությունների համար նախատեսված հաստիքների): Ընդ որում 2023 թվականի ընթացիկ բյուջետային տարում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, այդ թվում վարչական շրջանների աշխատակազմերի հաստիքների միջին տարեկան ցուցակային ընդհանուր թվաքանակը կազմել է 1875.0: Աշխատավարձի ֆոնդը ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2024 թվականին ծրագրվել է 13 ամսվա աշխատավարձի չափով, որը նախատեսված է հավելավճարների, արձակուրդայինների և վերջնահաշվարկների վճարման համար: 2023 թվականի ճշտված՝ 562,596.0 հազ. դրամի դիմաց՝ ***պարգևատրման ֆոնդը*** նախատեսվել է 104,715.0 հազ. դրամով պակաս, կազմելով՝ 457,881.0 հազ. դրամ: ***Էներգետիկ ծառայությունները*** ներառում են էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը, որոնք հաշվարկվել են հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի և 2023 թվականին սպասվող ծախսերի ծավալների միջին ցուցանիշները, ինչպես նաև ներկայումս գործող հանրային ծառայությունների սակագները: Մասնավորապես, այս հոդվածով 2024 թվականին նախատեսվել է 275,367.3 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված ցուցանիշից 19416.5 հազար դրամով պակաս: ***Կոմունալ ծառայությունները***

ներառում են ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի միջատազերծման հետ կապված ծախսերը և ծրագրվել են 22,338.3 հազ. դրամի չափով՝ 2023 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից 630.5 հազ. դրամով ավել, հաշվի առնելով ներկայումս գործող սակագները: ***<u>Կապի ծառայությունները</u>*** ներառում են փոստային ծառայությունները, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունները: Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այս հոդվածը ներառող բոլոր ծառայությունների համար ընդհանուր նախատեսվել է 365,711.6 հազ. դրամ, ինչը պակաս է 2023 թվականի ճշտված ցուցանիշից 66,217.7 հազ. դրամով: ***<u>Ապահովագրական ծախսերը</u>*** նախատեսվել են 15,008.0 հազ. դրամի չափով՝ հիմք ընդունելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի պահանջները, սահմանված գները և Երևանի քաղաքապետարանում հաշվառված մեքենաների քանակը: ***<u>Գույքի և սարքավորումների վարձակալությունը</u>*** ծրագրվել է 60,720.0 հազ. դրամ՝ 2023 թվականին նախատեսված ցուցանիշից 12,720.0 հազ. դրամով ավել, որը ներառում է քաղաքապետարանի որոշ ծառայողական մեքենաների վարձակալությունը, որն իր հերթին ներառում է նաև դրանց ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի ծառայությունը: ***<u>Ներքին գործուղումների գծով</u>*** ծախսերի համար նախատեսվել է 1,100.0 հազ. դրամ, 2023 թվականին նախատեսված ցուցանիշից 3,900.0 հազ. դրամով պակաս, որով նախատեսվում է իրականացնել ներհանրապետական գործուղումներ, իսկ ***<u>Արտասահմանյան գործուղումների</u>*** գծով՝ հիմք ընդունելով նախորդ տարիների փաստացի ծախսերը, 2024 թվականին ծրագրված քանակական ցուցանիշները, նախատեսվել է 59,000.0 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված ցուցանիշից 1,000.0 հազ. դրամով պակաս՝ հաշվի առնելով կանխատեսվող գործուղումների քանակը: ***<u>Վարչական ծառայությունների</u>*** գծով նախատեսվել է 14,020.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի և կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմերում փաստաթղթերի կարման և կազմման, ինչպես նաև

թարգմանչական ծառայությունների համար՝ 2023 թվականին նախատեսված 12,705.0 հազ. դրամի դիմաց***: Համակարգչային ծառայությունների*** գծով ծրագրվել է 82,376.0 հազ. դրամ՝ քաղաքապետարանի համայնքների եկամուտների կառավարման էլեկտրոնային համակարգի, տեղական տուրքերի, հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի, գանձապետական և բյուջեի նախագծման ու կառավարման համակարգչային առկա ծրագրերի, Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգի, Mulberry համակարգի, ինչպես նաև dimum.yerevan.am էլեկտրոնային համակարգի սպասարկման համար: ***Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների*** համար նախատեսվել է 26,000 հազ. դրամ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համայնքային ծառայողների վերապատրաստման և նեղ մասնագիտական ու կոմպետենցիաների վերապատրաստման համար աշխատակիցների մասնակցելու գործընթացը ապահովելու համար, որը 2023 թվականի հաստատված ցուցանիշից պակաս է 15,000.0 հազ. դրամով: ***Տեղեկատվական ծառայությունների*** գծով ծախսերը նախատեսվել են 25,630.0 հազ. դրամի չափով՝ 2023 թվականին ճշտված ցուցանիշից 2,635.5 հազ. դրամով պակաս՝ բրոշյուրների, տպագրության, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, սոցիալական մեդիա մարքեթինգի ծառայության, լրատվական և գովազդային ծառայությունների, ինչպես նաև Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգում հայտարարությունների հրապարակման ձեռքբերման նպատակով: ***Կառավարչական ծառայությունների*** գծով ծախսերը նախատեսվել են 60,000.0 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված ցուցանիշից 4,000.0 հազ. դրամով պակաս: Ծախսերը ներառում են Երևանի քաղաքապետարան կառավարչական հիմնարկի գույքագրման ծառայությունները, ինչպես նաև աուդիտորական մասնագիտացված կազմակերպությունների ծառայությունները, մասնավորապես «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի կատարման

հաշվետվության վերաբերյալ անկախ աուդիտ անցկացնելու համար: ***Ներկայացուցչական ծախսերի*** գծով ծրագրվել է 62,413.5 հազ. դրամ, ինչը պակաս է 2023 թվականի հաստատված ցուցանիշից 6,732.0 հազ. դրամով: ***Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները*** ծրագրվել են 59,413.8 հազ. դրամի չափով, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանության ծառայությունը: ***Մասնագիտական ծառայությունների*** գծով նախատեսվել է 15,045.1 հազ. դրամի չափով ծախս՝ փաստաթղթերի արխիվացման համար, ինչպես նաև գազի և ավտոմատ հեռախոսակայանի սպասարկման, հնոցապահի ծառայության, վարչական շենքերում վերելակների փորձաքննության տրամադրման համար և ծրագրվել է 2023 թվականի հաստատված բյուջեից 128.2 հազ. դրամով ավել: ***Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման*** գծով ծրագրվել է 279,579.0 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 7,686.5 հազ. դրամով ավել, որը ներառում է քաղաքապետարանի և վարչական շրջանների ավտոմեքենաների, գույքի, համակարգչային տեխնիկայի և այլ սարքավորումների ընթացիկ նորոգումը և պահպանումը: Հաշվարկների հիմքում դրվել է քաղաքապետարանի հաշվեկշռում ընդգրկված և շահագործվող գույքի, այդ թվում ավտոմեքենաների քանակական և որակական ցուցանիշները, ընդ որում սույն հոդվածի թվային ավելացումը մեծամասամբ պայմանավորված է մեքենաների մաշվածության բարձր մակարդակի հետ: ***Գրասենյակային նյութեր և հագուստ*** հոդվածով ծախսերը ծրագրվել են 69,071.6 հազ. դրամ, ինչը ավել է 2023 թվականի հաստատված ցուցանիշից 7,236.1 հազ. դրամով՝ հաշվարկվել են հաշվի առնելով գործունեության համար անհրաժեշտ գրասենյակային նյութերը: ***Տրանսպորտային նյութերը*** ծրագրվել են 243,544.0 հազ. դրամի չափով 2023 թվականի հաստատված ցուցանիշից 25,164.0 հազ. դրամով ավել, որը հիմնականում պայմանավորված է ավտոմեքենաների վառելիքի թանկացման հետ: Հաշվարկը իրականացվել է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների թվաքանակով, ինչպես նաև որոշ կառուցվածքային ստորաբաժանումների առանձնահատկություններով պայմանավորված

անձնական ավտոմեքենաների ծառայողական նպատակներով օգտագործման հանգամանքով: ***Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ*** գծով նախատեսվել է 33,281.6 հազար դրամ՝ 2023 թվականի 30,793.2 հազ. դրամի դիմաց, ավելացումը հիմնականում պայմանավորված է գնաճով և նախատեսվում է տնտեսական ապրանքների ձեռք բերման նպատակով: ***Հատուկ նպատակային այլ նյութերի*** գծով ծրագրվել է 15,979.7 հազ. դրամ՝ գրեթե այնքան որքան 2023 թվականին, որի շրջանակներում մշակութային միջոցառումների, տոնական և հիշատակի օրերի և այլ դեպքերի համար նախատեսվել է ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների, հուշամեդալների և կրծքանշանների ձեռք բերում: ***Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին*** հոդվածով ծրագրվել է 297,043.8 հազ. դրամ, ինչը ներառում է Երևանի քաղաքապետարանի վարչական շենքի և 2-րդ վարչական շենքի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները, նյութերը և ընթացիկ այլ աշխատանքները՝ գրեթե 2023 թվականին հաստատված ցուցանիշի չափով: ***Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին*** հոդվածով ծրագրվել է 42,600.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 14,200.0 հազ. դրամով ավել, որով նախատեսվում է՝ Երևանի քաղաքապետարանի թվով 6 ավտոբուսների սպասարկման համար, որոնք իրականացնելու են աշխատակազմի աշխատակիցների փոխադրումը աշխատանքային օրերին՝ առավոտյան և երեկոյան ժամերին, սահմանված 6 ուղղություններով, իսկ ավելացումը պայմանավորված է 2023 թվականին գործող թվով 4 ավտոբուսները ևս 2-ով ավելացնուլու հետ: ***Այլ նպաստներ բյուջեից*** հոդվածով նախատեսվել է 58,500.0 հազ. դրամ՝ որպես դրամական փոխհատուցում Երևան քաղաքի ավագանու անդամներին՝ այնքան որքան 2023 թվականին նախատեսված ցուցանիշն է: ***Պարտադիր վճարների*** գծով՝ կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների տեխնիկական զննման ծախսերի և տուրքերի վճարման համար ծրագրվել է 20,209.5 հազ. դրամ: ***Այլ ծախսեր*** հոդվածով ծրագրվել է 160.234.0 հազ. դրամ՝

2024 թվականի ընթացքում կառավարչական մարմնի պահպանման հետ կապված այլ չկանխատեսված ծախսերի համար: ***Վարչական սարքավորումների*** գծով ծրագրվել է 133,289.7 հազ. դրամ՝ 2023 թվականի ճշտված բյուջեից 105,745.2 հազ. դրամով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվել է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին տրամադրել անհրաժեշտ գույք և տեխնիկա, որոնք արդեն պիտանի չեն օգտագործման և ենթակա են դուրս գրման: ***Այլ մեքենաներ և սարքավորումների*** գծով նախատեսվել է 940.0 հազ. դրամ, որով նախատեսվում է Կենտրոն վարչական շրջանի վարչական շենքի համար ձեռք բերել հակահրդեհային համակարգ, Ավան վարչական շրջանի համար օդորոկիչներ, ինչպես նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի համար տեխնիկական գործիքների ձեռքբերման նպատակով: ***Ոչ նյութական հիմնական միջոցների*** մասով 2024 թվականին նախատեսվում է 23,000.0 հազ. դրամի շրջանակներում ձեռք բերել կիբեռանվտանգության համակարգ՝ ոլորտի զարգացման նպատակով:

1. **Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում** ծրագրով նախատեսվել է 38,096.8 հազ. դրամ՝ 2023 թվականի ճշտված բյուջեով նախատեսված 557,137.1 հազ. դրամի դիմաց կամ 93.16%-ով պակաս: Ծրագրված գումարի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Ավան, Դավթաշեն, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ:

2. **Երևան քաղաքին միջազգային վարկանիշ շնորհելու ծառայությունների դիմաց վճարման ծախսեր** ծրագրով նախատեսվել է 14,000.0 հազ. դրամ: 2016 թվականին Երևանի քաղաքապետարանը վարկանիշ շնորհելու ծառայությունների ձեռքբերման համար պայմանագիր կնքեց Fitch միջազգային վարկանիշային գործակալության հետ, որը ենթադրում է վարկանիշի վերանայում տարվա մեջ 2 անգամ: Հաշվի առնելով, որ ծրագիրը շարունակական է, 2024 թվականին ծրագրված գումարն ուղղվելու է նույն պայմանագրի շրջանակներում

վճարումներ իրականացնելուն: Ներկայումս Fitch միջազգային վարկանիշային գործակալության կողմից Երևան քաղաքին շնորհվել է BB- կայուն վարկանիշ:

3. <u>Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրով ծրագրվել է 33,983.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

4. <u>Նախագծային աշխատանքներ</u> ծրագրով նախատեսվել է 413,947.5 հազ. դրամ՝ կապիտալ ծրագրերը նախագծանախահաշվային փաստաթղթերով ապահովելու համար, 2023 թվականի հաստատված բյուջեով նախատեսվածից 947,562.5 հազ. դրամով կամ 69.6%-ով պակաս, ինչը պայմանավորված է նախորդ տարում պետության կողմից Երևանի քաղաքապետին՝ Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի կայարանի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռք բերումը՝ 1,100,000.0 հազ. դրամի չափով պատվիրակելու հետ:

5. <u>Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման վերլուծություն</u> ծրագրով նախատեսվել է 250,000.0 հազ. դրամ՝ որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքերը:

6. <u>Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարումներ</u> ծրագրով նախատեսվել է 158,200.0 հազ. դրամ՝ դատարան դիմելիս պետական տուրքերի վճարման համար, ինչը 56,200.0 հազ. դրամով կամ 55,.1%-ով ավել է 2023 թվականի բյուջեի ցուցանիշից, ավելացումը պայմանավորված է դատական ընթացակարգերի հաճախականության հետ:

7. <u>Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ</u> ծրագրով նախատեսվել է 26,100.0 հազ. դրամ, ինչը ներառում է Երևան համայնքին սեփականության իրավունքով փոխանցված գույքի, ինչպես նաև ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացում համայնքի սեփականություն

ճանաչվող գույքի գրանցման և գնահատման ծախսերը, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից տեղեկատվություն ստանալու վճարները:

8. <u>Քաղաքացիական պաշտպանությանն աջակցություն և զինապարտների հաշվառման, զորակոչի, զորահավաքի և վարժական հավաքների կազմակերպմանն աջակցություն</u> ծրագրերով 2024 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 62,750.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսվում է Երևանի ենթակայության կազմակերպությունների համար ձեռքբերել և տրամադրել թվով 120 հակահրդեհային վահանակներ՝ նախնական հրդեհաշիջման առաջնային միջոցներ/լրակազմ/, թվով 20000 հատ արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնների ուղեցույցեր, ձեռք բերել թվով 20 հատ բարձրախոս՝ բնակչության ազդարարման համար նախատեսված համակարգ/լրակազմ/ և թվով 20 հատ էլեկտրաշչակ, իրականացնել գործող էլեկտրաշչակների և էլեկտրաշչակների կառավարման ու հսկման համակարգերի ընթացիկ սպասարկում և վերանորոգում, ինչպես նաև նախատեսվում է աջակցել Երևան քաղաքում իրականացվող զորակոչի իրականացմանը:

9. <u>Այլընտրանքային աշխատանքային ծառայության իրականացում</u> ծրագրով նախատեսվել է 7,860.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված համապատասխան ծրագիրը:

10. <u>Իրավախախտ շրջիկ առևտրի կետը կամ տրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխման և պահպանման ծառայություն</u> ծրագրով նախատեսվել է 15,000.0 հազ. դրամ, որով նախատեսվում է՝ տնտեսական և առևտրային հարաբերությունները կարգավորել Երևան քաղաքում, մասնավորապես, կկարգավորվի գործող իրավախախտ շրջիկ առևտրի կետերի՝ այդ թվում տրանսպորտային միջոցների, կանխարգելման ընթացակարգերը:

11. <u>Ինքնակամ տեղադրված առևտրի, ծառայությունների մատուցման օբյեկտների ապամոնտաժման, տեղափոխման և պահպանման ծառայություններ</u> ծրագրով նախատեսվում է կարգավորել ինքնակամ տեղադրված առևտրային օբյեկտների ապամոնտաժման ընթացակարգերը: Ծրագրի բյուջեն կկազմի՝ 15,000.0 հազ. դրամ:

12. **<u>Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվում է 64,400 հազ. դրամ, կառուցվելու է Շինարարների 2 շենքի մոտ գտնվող ոռոգման պոմպակայանը, ինչպես նաև Լյուքսեմբուրգի 11, Լյուքսեմբուրգի 1-ին նրբ. 4, 6 շենքերի հարակից տարածքներում կառուցվելու է նոր ոռոգման համակարգ:

13. **<u>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի</u> և <u>Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» դրամաշնորհային</u>** ծրագրերի իրականացման համար նախատեսվել 1,373,110.3 հազ. դրամ, որից 194,666.7 հազ. դրամը՝ Երևան համայնքի բյուջեի համաֆինանսավորումն է: Ծրագրով նախատեսվում է իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված հիմնանորոգման աշխատանքներ թվով 5 նախադպրոցական հաստատություններում՝ հ.74, հ.135, հ.138, հ.161, հ.156 մսուր-մանկապարտեզներ, ինչպես նաև ծրագիրը կներառի թվով 35 նախադպրոցական հաստատությունների սեյսմակայունության ապահովման, արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման, դռների և լուսամուտների փոխարինման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման համակարգերի, լուսավորության համակարգերի վերակառուցման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովման միջոցառումները:

14. **<u>Երևանի էներգաարդյունավետության ծրագրի և դրամաշնորհային ծրագրի համաֆինանսավորում</u>** ծրագրի իրականացման համար նախատեսվել է 400,000.0 հազ. դրամ:

15. **<u>Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 3,652,464.5 հազ. դրամ՝ 2023 թվականի ճշտված բյուջեի՝ 3,467,385.8 հազ. դրամի դիմաց:

16. **<u>Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագիր, ծրագրի</u>**

<u>համակարգման և կառավարման (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրերով նախատեսվել է 4,262,835.5 հազ. դրամ՝ 2023 թվականի ճշտված բյուջեի 3,781,199.1 հազ. դրամի դիմաց: Նախատեսվում է իրականացնել Իսակով-Արշակունյաց հատվածի ճանապարհաշինարարական աշխատանքները:

17. **<u>Եզրաքարերի վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 176,500.0 հազ. դրամ՝ վթարված եզրաքարերի վերանորոգման և փոխարինման, ինչպես նաև քայքայված բետոնե եզրաքարերի վերականգնման համար:

18. **<u>Հենապատերի վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 188,839.3 հազ. դրամ: Հենապատերի ընտրությունը կատարվում է ըստ նրանց վթարայնության և վերանորոգման հրատապության աստիճանի: Ծրագրով նախատեսվում է կապիտալ հիմնանորոգել՝ Կիևյան 11, Փափազյան 2-րդ նրբանցք, Դավթաշեն 2-րդ թաղամասի 17-19 շենքերի բակ, Գ.Մահարի փող. 127շ., Խորենացի փող. հ.120 դպրոցի հարակից տարածք, Սարիթաղ 2-րդ շարք, Գլինկա և Խորենացի փողոցների հատման տարածք, Տերյան 83, Ս.Կապուտիկյան 2, Մատենադարան, Դեմիրճյան 19, Դեմիրճյան 27, Արամի 5ա, Սարյան-Արամի, Հերացի 24, Տերյան փ. վերջնամաս, Վարդանանց 32, Խորենացի փողոց (Նար-Դոս- Քրիստափոր), Դեմիրճյան 26, Տ. Մեծ 39, Փարպեցի եկեղեցու բակ, Կողբացի փ., Տիչինա փողոց 2-րդ նրբ. հ 121 դպ. տարածք, Բաբաջանյան 31-35 շենքերին հարող տարածք, հ 181 դպրոցի ետնամաս, Սերո խանզադյան փողոց, Ա. Արմենակյան, Լեփսիուսի 8 շ., Հասրաթյան 7/3, 7/4, 7/5 շենքեր, Ռուբինյանց 2/1 շ. հասցեների հարակից տարածքներում գտնվող հենապատերը, ինչպես նաև նախատեսվում է իրականացնել Նորքի այգիներ փողոցից դեպի եկեղեցի տանող պարսպի կառուցման աշխատանքներ և շարունակել հ.124 մանկապարտեզի պարսպի կառուցման աշխատանքները:

19. **<u>Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 79,000.0 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 64,000.0 հազ. դրամով ավել: Ծրագրով նախատեսվում է իրականացնել Նոր-Նորք վարչական շրջանի Գայի պողոտայի

սկզբնամասում ստորգետնյա հետիոտնային անցման հիմնանորոգման աշխատանքներ:

20. **<u>Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 390,000.0 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը ավել է 2023 թվականի հաստատված բյուջեից 195,000.0 հազ. դրամով: Այն ուղղվելու է Երևան քաղաքի Լամբադա կամրջի, Արարատյան փողոցի էստակադայի հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև Երևան քաղաքի թվով 44 կամուրջների վերգետնյա անցումների և ուղեանցերի սպասարկմանը:

21. **<u>Հրազդանի կիրճի և Երևանյան լճի բարեկարգում</u>** ծրագրով նախատեսվել է 2,100.0 հազ. դրամ, որը նախատեսվել է Հարազդան կիրճի՝ Արաբկիր վարչական շրջանի հատվածում ընթացիկ պահպանման աշխատանքների համար:

22. **<u>Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 947,319.1 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 543,246.0 հազ. դրամով ավել: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքի տարբեր հատվածներում ընթացիկ վերանորոգման և սալիկապատման աշխատանքներ: Նախատեսվում է նաև իրականացնել մայթերի վերակառուցման կամ հիմնանորոգման աշխատաքներ հետևյալ հասցեներում՝ Սաֆարյան փողոց, Խուդյակով փողոց, Ալմա Աթա փողոց, Ազատամարտիկների այգու տոմետ /2-րդ մաս/, Ազատամարտիկների այգու հարակից մայթի տոմետ /3-րդ մաս/, Դեմիրճյան 19, Իսահակյան (Մաշտոցից-Կասկադ), Աբովյան (Կորյունից-Աբովյան պուրակ), Ս.Կապուտիկյան, Հերացի 2-Մաշտոցի համալսարան Ճոպանուղու մայթ, Խանջյան (Թումանյանից-Վարդանանց), Եր. Քոչար (Վարդանանցից-Քաջազնունի) Սասի ձախակողմյան հատված, Տ.Մեծ (Տաշիրից-Զավարյան)-Նար-Դոս, Գր. Լուսավորիչ փողոցի աջ և ձախ մայթեր, Եր.Քոչար (Սասի դիմացի մայթ) դեպի Տ.Մեծ, Պուշկին փողոց, Մոսկովյան (Բաղրամյանից-Թումանյան), Նալբանդյան (ԱԱԾ դիմացի մայթ), Խորենացի փողոց (Նար-Դոս - Քրիթստափոր) աջ և ձախ մայթեր, Խորենացի

(Իտալիայի հրապ.-Ագաթանգեղոս), Բայրոն փողոց (աջ և ձախ մայթեր) դեպի Կոնսերվատորիա-Տերյան, Այգեստան 9,10,11 փողոցներ (Չարենցի փ.-ից դեպի թիվ 20 դպրոց), Թումանյան փողոցից դեպի Սախարովի հրապարակ, Անտառային, Չարենց-Զիգզագ փ., Խորհրդարանի-Գր. Լուսավորիչ, Ֆրիկի (Սարյան փոստ), Սվաճյան փողոցի մայթ, Անդրանիկ փողոցից դեպի Շերամի փողոց տանող ճանապարհի աջակոմյան հատված, Շերամ 1-ին փողոցին կից մայթի (Արարատյան 1զ 2շ մինչև 12շ հատված) վերակառուցման աշխատանքներ, Նուբարաշեն 9 և 13 փողոցներ, Կարախանյան փողոցում մայթի կառուցում:

23. **<u>Փողոցների պահպանում և շահագործում</u>** ծրագրով նախատեսվել է 1,218.3 հազ. դրամ, որը նախատեսված է լուսացույցերի SIM քարտերի սպասարկման և Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի էլ. էներգիա ծախսերի համար:

24. **<u>Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն</u>** ծրագրով նախատեսվել 428,034.0 հազ. դրամ՝ ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի N 1214-Ա և Երևան քաղաքի ավագանու 21.12.2016թ. N 655-Ա որոշումների հիման վրա «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի կողմից ծառայությունների մատուցման համար և Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղիի պահպանման համար:

25. **<u>Թեքահարթակների կառուցում</u>** ծրագրով՝ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման մատչելիություն ապահովելու նպատակով, նախատեսվել է 121,000.0 հազ. դրամ՝ շուրջ 605 թեքահարթակի կառուցման համար: Ծրագրով նախատեսված ցուցանիշը ավել է 2023 թվականի հաստատված բյուջեից 97,900.0 հազ. դրամով:

26. **<u>Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում</u>** ծրագրով նախատեսվել է 593,291.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել և վարչական շրջանների փողոցներում տեղադրել նստարաններ, աղբամաններ, փողոցների ուղենիշեր, հայտարարությունների ցուցատախտակներ: Նախատեսվում է նաև իրականացնել թվով 41 հատ հետիոտնային կանչի ռեժիմով աշխատող լուսացուցային համակարգերի

ձեռքբերում և տեղադրում, թվով 40 հատ կանգառասրահների ձեռքբերում և տեղադրում, թվով 450 հատ դրոշակահենքերի պատրաստում և տեղադրում, շենքերի և փողոցների անվանումների թվով 740 միասնական ցուցանակների պատրաստում և տեղադրում, փողոցների թվով 58 ուղենիշերի պատրաստում և տեղադրում, ինչպես նաև մետաղական ճաղավանդակների ձեռքբերում և տեղադրում՝ մայթը փողոցից սահմանազատելու համար: Ծրագրով նախատեսված ցուցանիշը ավել է 2023 թվականի հաստատված բյուջեից 242,171.0 հազ. դրամով:

27. <u>Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրով նախատեսվել է 765,928.6 հազ. դրամ, որի նպատակն է կարգավորել ճանապարհատրանսպորտային ոլորտը՝ ապահովելով դրա անվտանգությունը: Ծրագրի բյուջեն կազմվել է՝ հիմք ընդունելով 2024 թվականի պետական բյուջեի օրենքը:

28. <u>Տրանսպորտային համակարգի արդիականացում</u> ծրագրով նախատեսվել է 7,647,120.0 հազ.դրամ, 2023 թվականի ճշտված բյուջեի 6,101,077.6 հազ. դրամի դիմաց, որով նախատեսվում է ձեռք բերել թվով 171 հատ ավտոբուս:

29. <u>Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի համակարգում և կառավարում (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրով նախատեսվել է 1,171,420.4 հազ.դրամ, 2023 թվականի ճշտված բյուջեի 1,002,061.2 հազ. դրամի դիմաց՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին օրենքը:

30. <u>Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ)</u> ծրագրով նախատեսվել է 2,667,382.0 հազ.դրամ, Նոր Նորք վարչական շրջանի Գյուրջյան փողոցը Մյասնիկյան պողոտային միացնող ճանապարհի հիմնանորոգման և Նորագավիթ Մ2 Հ8 հատման հատվածում էստակադայի կառուցման աշխատանքների

իրականացման նպատակով՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին օրենքը:

31. **<u>Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 759,099.1 հազ.դրամ, Երևան քաղաքի Հրազդանի գետի վրա «Կիևյան» կամուրջի հիմնանորոգման և Երևան քաղաքում Հրազդան գետի վրա «Հաղթանակ» կամրջի հիմնանորոգման /ուժեղացման/ աշխատանքների իրականացման նպատակով՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի մասին օրենքը**:**

32. **<u>Վերելակների հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 1,059,500.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեի 1,075,328.1 հազ. դրամի դիմաց: Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել բազմաբնակարան շենքերի համար թվով 100 վերելակ, ինչպես նաև հին վերելակների պահպանումը իրականացնելու համար ձեռք բերել և տեղադրել անհրաժեշտ սարքավորումներ:

33. **<u>Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 2,641,750.0 հազ. դրամ՝ մետրոպոլիտենի սուբսիդավորման նպատակով՝ որպես պատվիրակված լիազորություն՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշը:

34. **<u>Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություն</u>** ծրագրով նախատեսվել է 628,000.0 հազ. դրամ՝ որպես սուբսիդիա «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ–ին:

35. **<u>Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 331,518.9 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշը:

36. **<u>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագիր (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 1,018,752.0 հազ. դրամ՝ հիմք

ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշը:

37. **<u>Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների կառուցում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 4,000,000.0 հազ. դրամ՝ Աջափնյակ վարչական շրջանի մետրոպոլիտենի նոր կայարանի կառուցման աշխատանքների իրականացման համար՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշը:

38. **<u>Երևանի մետրոպոլիտենի ենթակառուցվածքների նորոգում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 879,380.0 հազ. դրամ՝ հիմք ընդունելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշը:

39. **<u>Զբոսաշրջության զարգացում</u>** ծրագրով նախատեսվել է 246,500.0 հազ. դրամ: Մասնավորապես, նախատեսվում է իրականացնել՝ Երևան քաղաքի բազմալեզու զբոսաշրջային քարտեզի տպագրում, նոր զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնի ստեղծում, գաստրոփառատոնի կազմակերպում, Երևանի մասին օտարալեզու միջազգային հիթի նախապատրաստական աշխատանքներ, տուրիզմի ոլորտում կրթական ակադեմիայի ստեղծում և այլ զբոսաշրջությանը նպաստող միջոցառումներ:

40. **<u>Դրոշների տեղադրում</u>** ծրագրով նախատեսվել է 32,000.0 հազ. դրամ, ինչը ներառում է՝ ինչպես հատուկ օրերին քաղաքի դրոշակազարդման աշխատանքները, այնպես էլ քաղաքի տարբեր հատվածներում ՀՀ դրոշների տեղադրումը, պարբերաբար փոխարինումը և սպասարկումը:

41. **<u>Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար</u>** ծրագրով նախատեսվել է 223,332.8 հազ. դրամ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը՝ նախատեսվել է հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար, ինչպես նաև նախատեսվել է

207,873.6 հազ. դրամի չափով սուբսիդավորել «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ին:

42. **<u>Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում</u>** ծրագրով նախատեսվել է 387,953.4 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 59,238.5 հազ. դրամով ավել: Ծրագիրը նախատեսված է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ–ին սուբսիդավորելու համար: Ավելացումը պայմանավորված է ընկերության կարողությունների հեռանկարի մեծացման հետ:

43. **<u>Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին</u>** ծրագրով նախատեսվել է 240,000.0 հազ. դրամ՝ կրթական, մշակութային, սոցիալ-հոգեբանական, բնապահպանական, հանրային խնդիրներով զբաղվող հասարակական և այլ կազմակերպությունների Երևան քաղաքին վերաբերող ծրագրերին աջակցելու նպատակով:

44. **<u>Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր</u>** ծրագրով նախատեսվել են մուտքեր (6,662,006.6) հազ. դրամ, այդ թվում՝

ա) անշարժ գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 1,460,000.0 հազ. դրամի չափով,

բ) հողի օտարումից մուտքերը ծրագրվել են 5,200,006.6 հազ. դրամի չափով

գ) Շարժական գույքի իրացումից մուտքերը ծրագրվել են 2,000.0 հազ. դրամի չափով:

45. **<u>Տոնական ձևավորում</u>** ծրագրով նախատեսվել է 123,920.0 հազ. դրամ՝ տոնական օրերին և Ամանորին Երևան քաղաքը ձևավորելու համար:

46. **<u>Հատակագծի նախապատրաստման և կազմման աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 34,510.0 հազ. դրամ՝ որը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին:

47. **<u>Ներդրումային ծրագրերի իրականացում</u>** ծրագրով նախատեսվում է 224,600.0 հազ. դրամ, 2023 թավականի հաստատված բյուջեով նախատեսված ցուցանիշից 58,841.8 հազ. դրամով ավել, ծրագրի շրջանակներում 6,000.0 հազ.

դրամը նախատեսվում է ներդրումային ծրագրերի վերաբերյալ տարատեսակ տեղեկատվական բրոշյուրների, բուկլետների, կատալոգների և ներդրումային տեղեկատվական գրքույկների, տպագրության համար, որը նպատակ ունի իրազեկելու հնարավոր ներդրողներին, ինչպես նաև հասարակության լայն շերտերին մայրաքաղաքում հնարավոր ներդրումներ իրականացնելու համար, 13,000.0 հազ. դրամ դրամաշնորհային ծրագրերի, մրցույթների հայտերի լրացման, ինչպես նաև ներդրումային և սուբվենցիոն ծրագրերի կազմման համար մասնագետների ներգրավման, պրեզենտացիաների, ֆիլմերի և այլ նյութերի պատրաստման համար, իսկ 205,600.0 հազ. դրամը նախատեսվում է որպես սուբսիդիա հատկացնել «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ին:

48. <u>Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում</u> ծրագրով նախատեսվել է 521,000.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեի 555,000.0 հազ. դրամի դիմաց, որը նախատեսվում է ուղղել չկանխատեսվող ծախսերի վրա:

49. <u>Աղբահանություն և սանիտարական մաքրում</u> ծրագրին հատկացվել է 104,645.6 հազ. դրամ: Ծրագրով նախատեսված ցուցանիշը ավել է 2023 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից 54,000.0 հազ. դրամով: Ծրագրով նախատեսվում է կառուցել աղբամանների համար հարթակներ, ձեռք բերել մայթերի մաքրման համար մաքրող-ավլող ինքնագնաց մեքենա՝ թվով 50 հատ, փողոցները ավլող-լվացող մեքենա՝ թվով 2 հատ:

50. <u>Աղբամուղերի սպասարկման և շինարարական աղբի տեղափոխման ծառայություններ</u> ծրագրով նախատեսվել է 231,511.0 հազ. դրամ: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել վարչական շրջաններում հավաքված (լքված) շինարարական աղբի բարձումն ու տեղափոխումը:

51. <u>«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր</u> ծրագրով նախատեսվել է

5,000,763.3 հազ. դրամ, որով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները:

52. <u>«Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր» ծրագրի շրջանակներում մասհանումների գծով մարումների տրամադրում</u> ծրագրով նախատեսվում է նոր աղբավայրերի կառուցման շրջանակներում կնքված ենթավարկային մարումների նպատակով 14,100.0 հազ. դրամի չափով սուբսիդավորել պայմանագրի կողմ հանդիսացող «Երևան քաղաքի նոր աղբավայր» ՓԲԸ-ին:

53. <u>Ջրահեռացման կոմունիկացիոն ցանցերի կառուցում</u> ծրագրով նախատեսվել է 1,823,070.7 հազ. դրամ, 2023 թվականի նախատեսված բյուջեից 1,610,070.7 հազ. դրամով ավել: Ծրագրով նախատեսվում է իրականացնել ջրամատակարարման, ջրահեռացման և հեղեղատար համակարգերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ: Մասնավորապես, նախատեսվում է հիմնանորոգել կառուցել և վերակառուցել՝ Աջափնյակ վարչական շրջանի Նազարբեկյան թաղամասի հհ.1 և 1Ա շենքերի կոյուղագծերը, Ավան վարչական շրջանի Ալմա-Աթայի փողոցից Ա.Շահինյան 4-րդ նրբանցք կոյուղագծերը, Արաբկիր վարչական շրջանի Ղափանցյան փողոցի վերջնամասի կոյուղագծերը, Դավթաշեն վարչական շրջանի 2-րդ թաղամասից դեպի Եղվարդի խճուղի կոյուղագծերը և հեղեղատար համակարգը, Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշի 34-րդ փող. հեղեղատար համակարգը, Կենտրոն վարչական շրջանի Պուշկինի փողոցի հ.49-ից Փարպեցի փողոցի կոյուղագիծը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա.Բաբաջանյան փողոց հ.1 շենքից հ.5 շենքի կոյուղագիծը, Հաղթանակ թաղամաս 13-րդ փողոցի կոյուղագիծը, Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի հ.28 տնից մինչև Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի 3-րդ նրբանցք կոյուղագիծը, Հաղթանակ թաղամաս 1-ին փողոցի հ.49/2-ից մինչև հ.64/1 կոյուղագիծը, Անդրանիկի փողոցի հ.121 և 123 շենքերի կոյուղագիծը, Նոր Նորք վարչական շրջանի Նոր Նորքի 8-րդ զանգված հհ.28, 29, 34 շենքերի կոյուղագիծը, Ջրվեժ, Բանավան թաղամասի հհ.10, 11, 12 շենքերի կոյուղագիծը, Շենգավիթ վարչական շրջանի Մանթաշյան փողոց հ.9 հացեից հ.49 հասցեի

կոյուղագիծը, Ներքին Շենգավիթ 6-րդ փողոցի վերջնամասից դեպի Արշակունյաց պողոտա կոյուղագիծը, Նորագավիթ 13-րդ փողոցի կոյուղագիծը, Բագրատունյաց փողոց հ.47/2 շենքից Ե. Թադևոսյան փողոցի կոյուղագիծը, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Լեփսիուսի 6-րդ փողոց հ.7 շենքից հ.2 և հ.4 շենքերի միջնամասի կոյուղագիծը, Նուբարաշենի վարչական շրջանի Նուբարաշեն 11փ 15շ կոյուղին, Նուբարաշեն Նոր Զմյուռնյայի հեղեղատարի, Նուբարաշեն 9-րդ փողոց հ.4 շենքին հարակից տարածքի կոյուղագիծը, Աջափնյակ վարչական շրջանի Ֆուչիկի փողոցի հ.5շենքից հ.7 շենք կոյուղագիծը, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ուլնեցու 1-ին փակուղի 6-րդ շենքի, Վրթանես Փափազյան փողոցի հ.1 շենքի /Հ.150 մանկապարտեզ/, Նորաշխարհյան փողոցի հ.9 շենքի /Հ.151 մանկապարտեզ/ կոյուղագծերը, Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոց հ.45 շենքի կոյուղագիծը, Դավթաշեն 2-րդ թաղամասի հ.20 շենքից մինչև հ.16 շենքի կոյուղագիծը, Դավթաշեն 2-րդ թաղամասի հհ.37ա, 37, 36, 35, 38, 39 շենքերի կոյուղագծերը:

54. **<u>Գետերի հունների մաքրում</u>** ծրագրով նախատեսվել է 38,683.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշի չափով՝ Գետառ և Ողջաբերդ գետերի հունների մաքրման նպատակով:

55. **<u>Շրջակա միջավայրի և օդի աղտոտման դեմ միջոցառումների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 14,300.0 հազ դրամ՝ Նուբարաշեն թափոնակուտակիչում բիոգազի հավաքման և այրման կայանի շահագործման նպատակով:

56. **<u>Կանաչ տարածքների հիմնում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 3,300,000.0 հազ. դրամ, որն ուղղվելու է «Կանաչապատման և շրջակա միջավայրի պահպանման» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի սուբսիդավորմանը:

57. **<u>Ախտահանման և միջատազերծման ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 26,932.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի տարբեր հատվածներում դեռատիզացիոն աշխատանքների կազմակերպման համար:

58. **<u>Հասարակական զուգարանների պահպանում և վերանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 16,820.0 հազ. դրամ: Գումարը նախատեսված է թվով 11 գործող զուգարանների պահպանման և մաքրման աշխատանքները կազմակերպելու համար:

59. **<u>Թափառող կենդանիների վնասազերծում</u>** ծրագրով նախատեսվել է 275,937.2 հազ. դրամ, որը նախատեսվել է ուղղել «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ի գործունեության ապահովմանը:

60. **<u>Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում</u>** ծրագրով 2024 թվականի բյուջեով նախատեսվել է 82,000.0 հազ. դրամ, որն ուղղվելու է Հրազդանի կիրճում կուտակված աղբի հավաքմանը՝ շուրջ 9000խմ:

61. **<u>Ինքնակամ կառույցների քանդում</u>** ծրագրով նախատեսվել է 65,000.0 հազ. դրամ, 2023 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 20,000.0 հազ. դրամով կամ 23.53%-ով ավել: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է Երևան քաղաքում ապօրինի տեղադրված, հնաոճ գովազդային վահանակների ապամոնտաժման աշխատանքները:

62. **<u>Չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների կողմից վարձակալած բնակարանների փոխհատուցման</u>** ծրագրով 2024 թվականի նախագծով նախատեսվում է 7,920.0 հազ. դրամ՝ Արզումանյան փողոցի վթարային շենքի բնակիչներին փոխհատուցում տրամադրելու նպատակով:

63. **<u>Չորրորդ աստիճան վթարային շենքերի քանդման հետևանքով բնակտարածություններից զրկված բնակիչների փոխհատուցման համար բնակարանների ձեռքբերում</u>** ծրագրով 2024 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է շուրջ 500,000.0 հազ. դրամ, որի նպատակն է Երևան քաղաքի Արցախի պողոտա 4-րդ նրբանցքի հ.10 (հանրակացարանի մասնաշենք), Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի հ.10 (սպորտային մասնաշենք), Արցախի պողոտայի 4-րդ նրբանցքի հ.10/1 հասցեների քանդման ենթակա 4-րդ աստիճանի

վնասվածություն ունեցող հանրակացարանային թվով 3 շենքերի բնակիչներին վերաբնակեցնելու՝ նոր բնակարանների ձեռքբերման համար:

64. **<u>Վթարային շենքերի վերաբնակեցման ծրագրի իրացման միջոցառումների շրջանակում</u>** նախատեսվել է 369,745.8 հազ դրամ, հանրության գերակա շահ ճանաչված՝ Երևան քաղաքի Արզումանյան փ. 10 և 17 շենքերի և հարակից տարածքներում առկա 76 միավոր գույքի օտարման և կադաստրային ու նոտարական ձևակերպումներն իրականացնելու նպատակով:

65. **<u>Շենքերի գեղարվեստական լուսավորում</u>** ծրագրով նախատեսվել է 15,712.0 հազ. դրամ, որն ուղղվելու է Շենգավիթ վարչական շրջանում շենքերի գեղարվեստական լուսավորման ընթացիկ պահպանման ծախսերին, ինչպես նաև կայարանամերձ հրապարակի և Սասունցի Դավթի արձանի գեղարվեստական լուսավորության ընթացիկ պահպանման ծախսերին:

66. **<u>Արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 2,080,804.8 հազ. դրամ, 2023 թվականի ճշտված բյուջով նախատեսված ցուցանիշից 380,804.8 հազ. դրամով կամ 22.4%-ով ավել՝ ներկայումս գործող լուսավորության ռեժիմի պահպանման պարագայում աշխատանքների կազմակերպման համար:

67. **<u>Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի քաղաքային լուսավորության» (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրերով նախատեսվել է 40,178.3 հազ. դրամ, որի շրջանակներում իրականացվելու է Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության ցանցի արդիականացման ծրագիրը, որը նախատեսում է առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED տիպի լուսատուներով:

68. **<u>Շենքերի և շինությունների հետազոտման աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ, 2023 թվականի ճշտված բյուջեով նախատեսված ցուցանիշից 6,000.0 հազ. դրամով կամ 42.86%-ով ավել, ինչը ներառում է բազմաբնակարան շենքերի սեյսմիկ անվտանգության,

վթարայնության աստիճանի հետազոտումը և դրանց վերաբերյալ տեխնիկական եզրակացությունների տրամադրումը:

69. <u>Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում և բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում</u> ծրագրերով նախատեսվել է ընդհանուր 824,157.9 հազ. դրամ, 2023 թվականի ճշտված բյուջեի 840,743.3 հազ. դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում կատարվելու են վարչական շրջանների հարթ և թեք տանիքների նորոգման, հիմնանորոգման աշխատանքներ: Մասնավորապես, հարթ տանիքների մասով նախատեսվում է՝ ամբողջ Երևան քաղաքում, վերանորոգել շուրջ 48,1 հազ. քմ, թեք տանիքների կապիտալ հիմնանորոգման մասով նախատեսվում է հիմնանորոգել հետևյալ հասցեները՝ Կոմիտաս 44, Կոմիտաս 54, Էրեբունի փողոց հ.3 շենք, Ավանեսովի փողոցի հ.14 շենքի, Մուրացան փողոց հ.192 շենք, Գ.Մահարու փողոց հ.39Ա շենք, Բայրոն 6, Տիգրան Մեծ 27 բն. 41, Տիգրան Մեծ 51, Մյասնիկյան 7, Աբովյան 35, Աբովյան 48, Վարդանանց 26, Հերացի 10, Այգեստան 67, Մաշտոց 7, Մոսկովյան 27, Թումանյան 10, Սարյան 20, 18, 16, Գր. Լուսավորիչ 12, Գր. Լուսավորիչ 3, Արշակունյաց 16, 6, 16ա, Զաքյան 2, 4, Խորենացի 9, Աղայան 15, Նուբարաշեն 6փ .130 և 6 փողոց 1-ին նրբանցքի թեք տանիքների հիմնանորոգման աշխատանքներ: Ծրագրով նախատեսվում է նաև առանձին թիթեղների ձեռք բերում, որոնք ուղղվելու են թեք տանիքների մասնակի վերանորոգմանը:

70. <u>Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում ծրագրով</u> նախատեսվել է 4,279,248.5 հազ. դրամ, 2023 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից 1,258,056.0 հազ. դրամով ավել: Վարչական շրջանների կողմից ուսումնասիրությունների և խնդիրների գույքագրման արդյունքում՝ ընտրված բակերի ընթացիկ նորոգման, բարեկարգման, բակային տարածքներում խաղահրապարակների կառուցման և հիմնանորոգման, բակային տարածքներում աստիճանների վերակառուցման, զրուցարանների, նստարանների ձեռքբերման, ինչպես նաև շինանյութի ձեռքբերման և վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում խաղահրապարակների նորոգման համար: Մասնավորապես, կապիտալ

հիմնանորոգման և կառուցման մասով նախատեսվում է աշխատանքներ իրականացնել հետևյալ հասցեներում գտնվող շենքերի կամ օբյեկտների հարակից բակային տարածքներում՝ Էստոնական 7-9 շենքի բակի հիմնանորոգում, Բաշինջաղյան 1 փող 7շենքի բակի հիմնանորոգում, Հալաբյան 45շ. բակ, Նազարբեկյան ծառուղու վերջնամաս, Նազարբեկյան 1ա, 1բ, 2, 4 և 5 շենքերի միացյալ բակ, Ֆուչիկի 2-րդ նրբ. 2 շենք, Մարգարյան 23շ. բակ, Լուկաշին 2, 3 շենքերի բակ, Սայաթ-Նովա 1/3 (Ավան), Աճառյան 30-2, Հովհաննիսյան թաղամաս 24/2-28, Քուչակ թաղամաս 15-48, Վ. Համբարձումյան 7 և 9 շենքերի բակ, Վաղարշյան 1 և 3 շենքերի բակ, Կոմիտաս 16 շենքի բակ,Կոմիտաս 22 շենքի բակ, Կոմիտաս 44 շենքի բակ, Մամիկոնյանց 62 շենքի բակ, Գյուլբենկյան 39ա, Քոչար 27 և 27ա շենքերի բակ, Քանաքեռ ՀԷԿ 8 շենքի ֆուտբոլի դաշտ, Դավթաշեն 2-րդ թաղամասի 41 շենքի հարևանությամբ բասկետբոլի դաշտի կառուցում և բարեկարգում, Դավթաշեն 2-րդ թաղամասի 26 և 18-19 շենքերի հետնամասի բարեկարգում, Դավթաշեն 3-րդ թաղամասի 14-15 շենքերի բակ, Դավթաշեն 4-րդ թաղամասի 45-47 շենքերի բակ, Աթոյան անցուղի հ.10 շենքի բակային տարածքի հիմնանորոգում, Արցախի պողոտա հ.14 շենքի բակային տարածքի հիմնանորոգում, Ավանեսովի փողոց հ.2/1 շենքի դիմացի բակային տարածքի հիմնանորոգում, Ավանեսովի փողոց հ. 2/1 շենքին հարակից, Նոր Արեշի 35 փողոց հ. 127 շենքի, Նուբարաշենի խճուղի հ. 5/3 շենքի բակային տարածքների վերանորոգում, Նուբարաշենի խճուղի հ.5/5 շենքի բակային տարածքի հիմնանորոգում, Սարի թաղի 4-րդ փողոց հ.66 մանկապարտեզի ետնամասում գտնվող այգու հիմնանորոգում, Շների զբոսայգու կառուցում Ազատամարտիկների այգում, Աթոյան անցուղի հ.9 շենքի բակային տարածքի հիմնանորոգում, Աթոյան անցուղի հ.10 շենքի բակային տարածքի հիմնանորոգում, Գուրգեն Մահարու փողոց հ.127 շենքի բակային տարածքի հիմնանորոգում, Հանրապետության 62, Աբովյան 62-66, 22ա, 29/2, Աղայան 9-Աբովյան 17,19, Աբովյան 30-32, Տիգրան Մեծ 36բ/միայն ֆուտբոլ, Տիգրան Մեծ 31բ, Տիգրան Մեծ 53 ֆուտբոլի դաշտ, Տիգրան Մեծ 36 դաշտ,խաղահրապարակ, Տիգրան Մեծ 51 բակ, Դեմիրճյան 29 ֆուտբոլի դաշտ, Խորենացի 25ա, Մաշտոցի 4, Մաշտոցի 5 բակ, դաշտ, Կողբացի

49,51,53, Կողբացի 2-2ա բակ, Բաղրամյան 21,23, Փարպեցի 2-րդ մանկապարտեզի հետևի բակ, Փարպեցի փողոց եկեղեցու բակ, Նալբանդյան 25ա, Նալբանդյան Թումանյան խաչմ.շատրվան, Քաջազնունի 11, Քաջազնունի 6-8 բակ դաշտ 2 հատ, Պարոնյան 4, Նար-Դոս 75-77, Նար-Դոս 4 ֆուտբոլի դաշտ,խաղահրապարակ, Արգիշտի 7/4, Ամիրյան 27, Զաքյան 4, Զաքյան 3-ի բակ, Ամիրյան 5ա բակային տարածք Թումանյան 11, Թամանյան 3 բակ, դաշտ, Թամանյան 1- Բաղրամյան 2 բակ, Դեմիրճյան 40 բակային տարածք, Ագաթանգեղոս 7, Զավարյան 1ա, Ալեք Մանուկյան 7, Իսահակյան 14-16 բակ, դաշտ, Նալբանդյան 49, Բայրոն 6-8, Սայաթ-Նովա 3,5 բակ, Մոսկովյան 31, Վարդանանց 5ա ֆուտ. Դաշտ, Վարդանանց 10 բակային տարածք, Բայրոն 12-Տերյան 83 բակ, Հերացի 18ա-20/22/24, Արգիշտի 11/4, Մոսկովյան 8 - Մաշտոց 48 բակ, Չարենց 2-4 բակ, Աբովյան 39 հետնամասի բակային տարածք, Բրյուսով 23-ի հետնամասի բակային տարածք, Պարոնյան Կոնդ, Սարյան փոստի ձախակողմ, Թումանյանի տուն թանգարանի ձախ կողքի աստիճաններ, Սարմեն փ.-Անտառային 3 աստիճաններ, Սարյան 33 աստիճաններ, Սարյան 31 աստիճաններ, Սարյան-Ամիրյան աստիճաններ, Ֆիզկուլտուրնիկների փողոցի աստիճաններ, Խորենացի փողոց, (Նար-Դոս-Քրիստափոր) աստիճաններ, Սարյան 29 աստիճաններ, Պարոնյան 28ա շենքի կողքը աստիճաններ, Արամի նրբ. 23 աստիճաններ, Սարյան20/1-ից Արամի 5 տանող աստիճաններ, Տ. Մեծ 39 աստիճաններ, Այգեստան 11 դեպի Սարալանջ, Կիլիկիա 1 ներբակային աստիճանների հիմնանորոգում, Չարենցի 7-ից դեպի 9-րդ փողոց 18 մանկապարտեզի ներբակային աստիճաններ, Իսակով պողոտա 50/3, 50/4 շենքերի բակի տիպային ֆուտբոլի դաշտ, Բաբաջանյան թ. 115շ ետնամասում գտնվող տարածքի վերանորոգում, Բաբաջանյան 9շ-ից դեպի Բաբաջանյան 31շ տանող անցուղու աստիճանների վերակառուցման աշխատանքներ, Բաբաջանյան 115, 117 շենքերի բակերի տիպային ֆուտբոլի դաշտ, Բաբաջանյան 91, 93 շենքերի բակի տիպային ֆուտբոլի դաշտ, Բաբաջանյան փ. հ 43շ հարող տարածք, Անդրանիկի փ. հ 76 շենքի հարակից տարածք, Անդրանիկի 103շ բակի տիպային ֆուտբոլի դաշտ, Անդրանիկի 104շ բակի ֆուտբոլի դաշտ, Շերամի փ. հ 115շ-ի

դիմացի տարածքի վերակառուցում, Շերամի 93շ հարող տարածքի վերակառուցում, Օհանովի փ. հ 6-ի դիմացի տարածքի վերակառուցում, Շերամի փ 15-17շշ-ի բակում գտնվող տիպային ֆուտբոլի դաշտի կառուցում, մինի ֆուտբոլի դաշտի ընթ.նորոգում /Նանսենի 2շ., Մոլդովական 46/1 շ., 106 դպրոցին հարակից տարածքներում/, 7-րդ զանգ. 45, 46, 47 շենքերի հարակից տարածքում խաղահրապարակի կառուցում, Թոթովենց 1 շենքի հարակից խաղահրապարակի բարեկարգում, Ջրվեժ, Բանավան 5 շենքի հարակից տարածքի բարեկարգում, Նոր Նորք վարչական շրջանի Մառի նրբ.6 շենքի հարակից տարածքի բարեկարգման աշխատանքներ, 7-րդ զանգ. հ.22 պոլիկլինիկային հարակից տարածքում ֆուտբոլի դաշտի կառուցման աշխատանքներ, Շոպրոնի 4-րդ նրբ. 4 շենքի դիմաց խաղահրապարակի վերակառուցման աշխատանքներ, Մոլդովական 24 շենքի հարակից աստիճանների հիմնանորոգում, Դ. Մալյան նրբ. 11 շենքից դեպի Մոլդովական 25/4 շենք տանող աստիճանների հիմնանորոգում, հ. 120 մսուր-մանկապարտեզին հարակից աստիճանների հիմնանորոգում, Վիլնյուսի 107 շենքի բակի բարեկարգում, հ.106 դպրոցի հարակից մարզահրապարակների հիմնանորոգում, Աէրացիա 1 շենքի բակ, Աէրացիա 5 շենքի բակ, Նորագավիթ 1-ին փող.,1-ին փակուղի, Այծեմնիկ Ուրարտուի 153, Մանթաշյան նրբ.թիվ 6 շենքի բակ, Չեխովի 15 շենքի բակ, Արշակունյաց 30,32 շենքերի միացյալ բակ, Բագրատունյաց 38, 38ա, շենքերի ֆուտբոլի դաշտի բարեկարգում, Բագրատունյաց 15 շենքի բակ, Գ.Նժդեհի 1,3 և Մանանդյան 17 շենքեր, Մանանդյան 14, Մանանդյան 16ա շենքի բակ, Նորագավիթ 13-րդ փողոցի բակի բարեկարգում, Նիզամի 13, Եղբայրության 3, 3ա շենքերի միացյալ բակ, Եղբայրության 19, Հայկ Հովսեփյան 11, Մանադյան 32 շենքերի միացյալ բակ, Շարուրի 27 և 29 շենքերի բակ (ֆուտբոլի դաշտ), Շարուրի 19 և 21 շենքերի բակ (ֆուտբոլի դաշտ),Արտաշիսյան 88, 88ա շենքերի միացյալ բակ, Գոգոլի 7 շենքի հարակից տարածքի բարեկարգում, Ռուբինյանց 6 շենքի հարակից տարածքի բարեկարգում, Գոգոլի 66 հասցեի հարակից տարածքի մինի ֆուտբոլի դաշտի կառուցում, 48 դպրոցի տարածքի Դրոյի 11/1 փ. տարածքի ֆուտբոլի դաշտի կառուցում, Ահարոնյան 16 շենքի հարակից տարածքի մինի ֆուտբոլի դաշտի

կառուցում, Դրոյի փող. 26 շենքի հարակից տարածքի ֆուտբոլի դաշտի կառուցում, Մ.Մելիքյան 13 և 17 շենքերի հարակից տարածք, Քանաքեռի 6 փ Սբ.Աստվածածին եկեղեցու մոտ, Ռուբինյանց 10, 12, 12/1 շենքերի հարակից տարածքի բարեկարգում, Մինաս Ավետիսյան 4-րդ փ.18-20, Մ. Ավետիսյան 2-րդ փողոց 11,13,15,17, Զ.Սարկավագի 125, 125/1, Մ.Մելիքյան 9/3, Լեփսիուսի 16 շենքի հարակից տարածքի բարեկարգում, Ներսիսյան փակուղի «Հայորդաց տան» հարակից տարածքի բարեկարգում:

71. **<u>Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ</u>** ծրագրով նախատեսվել է ընդհանուր 536,900.0 հազ. դրամ, 2023 թվականի բյուջեով նախատեսված ցուցանիշից 91,816.0 հազ. դրամով պակաս, որից 47,000.0 հազար դրամ գումարը հատկացվելու է վարչական շրջան-համատիրություն համագործակցության շրջանակներում մուտքերի նորոգման համար:

72. **<u>Կաթսայատների և գույքերի պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 15,450.2 հազ. դրամ՝ 2023 թվականի թվականի ճշտված բյուջեի չափով:

Նշված գումարով նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցված կաթսայատների զուտ պահպանման (պահակային ծառայության նվազագույն արժեքը) ծախսերը:

73. **<u>Վթարային պատշգամբների նորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 90,526.5 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեի ցուցանիշից 92,328.5 դրամով կամ 50.49%-ով պակաս: Նախատեսված գումարով նախատեսվում է իրականացնել վարչական շրջանների շուրջ 234 հատ վթարային պատշգամբների կապիտալ վերանորոգում:

74. **<u>Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսվել է հատկացնել 204,180.0 հազ. դրամ, 2023 թվականի բյուջեով նախատեսված 79,000.0 հազ. դրամի դիմաց, բժշկական սարքավորումներ՝ ուլտրաձայնային ստացիոնար հետազոտման սարքեր, ռենտգեն ապարատ, արյան բաղադրամասերի համար նախատեսված ցենտրիֆուգ, արյան մեջ հեմոգլոբինի չափման քանակական վերլուծիչ, բժշկական

մոնիտոր, հոսանքի գեներատոր անխափան սնուցման սարք ձեռք բերելու և բուժհաստատություններին տրամադրելու համար:

75. **<u>Առողջապահական օբյեկտների հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 40,168.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 358,194.0 հազ. դրամով պակաս, Արաբկիր վարչական շրջանի հ.11 պոլիկլինիկայի հիմնանորոգման աշխատանքների իրականացման նպատակով:

76. **<u>Դժվարամատչելի հետազոտությունների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 99,340.0 հազ. դրամ, 2023 թվականի 101,300.0 հազ. դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել է Երևանի քաղաքացիներին ըստ կարիքի գնահատման՝ թվով 555 անձի, կոնտրաստավորմամբ, կոմպյուտերային և մագնիսա-ռեզոնանսային տոմոգրաֆիայի, կրծքագեղձի քաղցկեղի սքրինինգի, կորոնորագրաֆիկ հետազոտությունների, ինչպես նաև սրտի անոթների ստենտավորման ծառայությունների տրամադրման համար:

77. **<u>Սպորտային միջոցառումների կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 326,803.2 հազ. դրամ՝ 2023 թվականի բյուջեով նախատեսված 103,970.4 հազ. դրամի դիմաց: Ծրագիրն իր մեջ ներառում է «Բարեկամության գավաթ», «Երևան մարաթոն», բռնցքամարտի Երևանի բաց առաջնության, Հունահռոմեական ոճի ըմբշամարտի Երևանի բաց առաջնություն, Ռուդոլֆ և Եղիշե Կարապետյանների հիշատակին նվիրված ազատ ոճի ըմբշամարտի, Մարմանամարզության Երևան քաղաքի բաց առաջնություն, Ձյուդոյի Երևան քաղաքի բաց առաջնություն, հունահռոմեական ոճի ըմբշամարտ նվիրված Հ. Խաչատրյանին և Ա. Մնացականյանին, ազատ ոճի ըմբշամարտի Երևանի բաց առաջնության միջազգային մրցաշարերը և ծրագրով նախատեսված այլ միջոցառումներ, այդ թվում նաև սպորտսմենների գործողումները և պարգևատրումները:

78. **<u>Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում ու պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 1,368,717.0 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված ցուցանիշի համեմատ 648,073.0 հազ դրամով ավել: Ծրագրի շրջանակներում իրականացվելու է Նոր Նորքի 2-րդ զանգվածի Վերածննդի այգու բարեկարգման

աշխատանքներ, Նորքի 7-րդ զանգվածի հրաձգարանի հարակից տարածքում շների զբոսանքի համար առանձնացված տարածքի կառուցում, Նուբարաշեն վարչական շրջանի 6-րդ փողոցի սկզբնամասի տարածքի բարեկարգում, Կոմիտասի այգում, Մ. Ավետիսյան պուրակում և Դրո-Սևակ փողոցների հատման մասի հարակից այգում շների զբոսանքի համար առանձնացված տարածքի կառուցում: Նախատեսվում է նաև ավարտին հասցնել պետական աջակցությանմբ 2023 թվականին մեկնարկած Դավթաշեն 1-ին և 2-րդ թաղամասերի միջև գտնվող կենտրոնական այգու հիմնանորոգման, Նոր Նորք վարչական շրջանի Դավիթ Բեկ փողոցի միջնամասում գտնվող այգու հիմնանորոգման և Սուրբ Սարգիս եկեղեցու և Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մոտ շատրվանների կառուցման և շրջակա տարածքի բարեկարգման աշխատանքները: Ինչպես նաև նախատեսվում է Երևանի 2800-ամյակին նվիրված այգու ջրահեռացման ջրամատակարարման ծառայությունների, Սքեյթ-պարկ էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների, Մալաթիա-Սեբաստիա Բ2 թաղամասում գտնվող այգու էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների, Սիրահարների այգու պահպանման ծախսերի իրականացումը:

79. **<u>Երևանի բուսաբանական այգու տարածքում անտառապուրակի կառուցապատման աշխատանքներ՝</u>** ծրագրով նախատեսվել է 2,200,000.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն:

80. **<u>Գրադարանային ծառայություններ</u>** ծրագրով նախատեսվել է 666,063.3 հազ. դրամ՝ 2023 թվականի համեմատ 3,598.6 հազ. դրամով պակաս: Նախատեսվում է Երևանի համայնքային գրադարանային կազմակերպություններին սուբսիդիա տրամադրելու համար:

81. **<u>Գրադարանների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում</u>** ծրագրով նախատեսվել է 40,000.0 հազ. դրամ՝ գրադարանների վերազինման, մասնավորապես, նոր թողարկված, արդի և ժամանակակից գրականության ձեռքբերման նպատակով: Ծրագիրը սկիզբ է առել 2022 թվականից և ունի շարունակական բնույթ:

82. **<u>Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ</u>** ծրագրով Երևանի ենթակայության թանգարանների պահպանման համար նախատեսվել է 360,301.0 հազ. դրամ՝ 2023 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ 35,492.0 հազ. դրամով ավել: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ֆինանսավորել՝ «Երևան քաղաքի պատմության թանգարան», «Ժամանակակից արվեստի թանգարան», «Կարեն Դեմիրճյանի թանգարան», «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան», «Երևանի Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան» ՀՈԱԿ-ներին:

83. **<u>Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 535,801.6 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության մշակույթի տների և մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների պահպանման նպատակով, 2023 թվականի հաստատված բյուջեից 3,385.2 հազ. դրամով պակաս:

84. **<u>Մշակութային միջոցառումների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 2,386,715.3 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեից 1,346,810.8 հազ. դրամով ավել: Ծրագիրն իր մեջ ներառում է Երևան պատանեկան սիմֆոնիկ նվագախմբի համերգային ծրագրերի, Կանանց միջազգային օրվա /մարտի 8/, Գիրք նվիրելու օր, Ջազի միջազգային օրվա /ապրիլի 30/, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա /հունիսի 1/ Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա /ապրիլի 24/, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների մրցույթ-ստուգատես, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-ստուգատես, «Արտիստը՝ դպրոցին», «Քույր դպրոցներ» ծրագրի գալա համերգ, "YEREVANCLASSICFEST" փառատոնի, Երևանի 2806 ամյակին նվիրված Էրեբունի-Երևան, Ամանորին և Սուրբ ծնունդին նվիրված, Երևանի օրերը քույր և գործընկեր քաղաքներում /Թբիլիսիի օրերը Երևանում/, Անգլիայի ազգային բալետի հյուրախաղերի կազմակերպում, «Ուրբան ֆեսթ» փառատոն, Կարճամետրաժ ֆիլմերի երևանյան փառատոն և այլ մշակութային միջոցառումներ, այդ թվում նաև՝ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնին, «Ֆոտոֆեստ» փառատոն, «Գրքի փառատոն»,

«Թատերական Երևան» և այլ ծրագրերի իրականացման նպատակով նախատեսված աջակցություններ:

85. **<u>Կենդանաբանական այգու ցուցադրություններ</u>** ծրագրով նախատեսվել է 429,904.8 հազ. դրամ՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ–ի սուբսիդավորման համար:

86. **<u>Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ</u>** ծրագրով նախատեսվել է 153,234.6 հազ. դրամ՝ Երևանի ենթակայության «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ», «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլհարմոնիա ՀՈԱԿ-ներին և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն ՓԲԸ–ին սուբսիդավորելու նպատակով:

87. **<u>Թատերական ներկայացումներ</u>** ծրագրի 2024 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 461,261.0 հազ. դրամ, Երևանի ենթակայության թվով 3՝ «Երևանի Հ.Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոն», «Երևանի պատանի հանդիսատեսի թատրոն» և «Միեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոն» ՀՈԱԿ-ների սուբսիդավորման համար:

88. **<u>Թատրոնների հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 300,000.0 հազ. դրամ՝ «Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոն» ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքների համար:

89. **<u>Հուշարձանների վերանորոգում և պահպանում</u>** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ՝ հուշարձանների լվացման և այն հուշարձանների նորոգման և պահպանման համար, որոնք ընդգրկված չեն պետական պահպանության ենթակա հուշարձանների ցանկում:

90. **<u>Երիտասարդական միջոցառումների իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 3000.0 հազ. դրամ՝ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ տոնական համերգի և ցուցահանդեսի կազմակերպման նպատակով:

91. **<u>Անդամակցության վճարներ</u>** ծրագրով նախատեսվել է 17,589.0 հազ. դրամ՝ Ֆրանսախոս քաղաքների քաղաքապետերի միջազգային ասոցիացիայի, Եվրոպական քաղաքների ասոցիացիայի (EUROCITIES), Միջազգային քաղաքային

համայնքների լուսավորում ասոցիացիայի (LUCI), Տեղական իշխանությունները հանուն կայունության ասոցիացիայի (ICLEI), Համաշխարհային ժառանգության քաղաքների կազմակերպության, ԱՊՀ մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային ասամբլեայի և Հայաստանի համայնքների միություն ՀԿ-ին անդամակցության նպատակով:

92. **<u>Նախադպրոցական ուսուցում</u>** ծրագրով նախատեսվել է 13,224,418.7 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեի 11,496,347.9 հազ. դրամի դիմաց: Բյուջեից հատկացումները հաշվարկվում են հաշվի առնելով՝ երեխայի փաստացի հաճախելիությունը, խմբերի քանակը և սննդի գծով ձևավորված շուկայական արժեքը:

93. **<u>Նախադպրոցական ուսուցման կազմակերպման համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսվել է 680,000.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեից 470,000.0 հազ. դրամով ավել, ինչի շրջանակներում նախատեսվում է Երևանի ենթակայության տակ գտնվող նախադպրոցական հաստատությունների աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով ձեռք բերել համապատասխան գույք, ինչպես նաև ուսուցողական և զարգացնող մանկական խաղեր: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

94. **<u>Նախադպրոցական կրթության հասանելիության և որակի ապահովում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 22,719.2 հազ. դրամ, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքի ցուցանիշների հիման վրա (նախակրթարանների մասով):

95. **<u>Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 668,844.2 հազ. դրամ, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքի ցուցանիշների հիման վրա (նախակրթարանների մասով):

96. **<u>Պետական աջակցությամբ իրականացվող նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 3,691,770.4 հազ. դրամ, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքի ցուցանիշների հիման վրա, որի շրջանակում նախատեսվում է կառուցել թվով 3 մանկապարտեզ Շենգավիթ, Արաբկիր և Ավան վարչական շրջաններում, հիմնանորոգել թվով 5 մանկապարտեզներ և դրանց բակային տարածքներ, ինչպես նաև թվով 12 մանկապարտեզների բակային տարածքներ:

97. **<u>Մասնագիտական զարգացման և վարձատրության փոխկապակցված համակարգի ներդրում՝ նախադպրոցական հաստատությունների մանկավարժներին տարակարգի շնորհման գործընթացի միջոցով (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 8,280.0 հազ. դրամ՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքի հիման վրա:

98. **<u>Նախադպրոցական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների մանկավարժների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 5,890.8 հազ. դրամ՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքի հիման վրա:

99. **<u>Հանրակրթական ուսուցում</u>** ծրագրով նախատեսվել է 17,589,463.6 հազ. դրամ, 2023 թվականի 17,903,942,7 հազ. դրամի դիմաց, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշներով և հաշվարկվել է օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով:

100. **<u>Բնագիտական ոլորտի առարկաներ դասավանդող ուսուցիչներին հավելավճարի տրամադրում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 399,683.6 հազ. դրամ՝ հաշվի առնելով ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքը:

101. **<u>Արտադպրոցական դաստիարակություն</u>** ծրագրով նախատեսվել է 4,880,008.6 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված ցուցանիշից 41,774,0 հազ.

դրամով ավել: Ծրագիրը հիմնականում ներառում է Երևանի ենթակայության երաժշտական, սպորտի, արվեստի և շախմատի դպրոցների սուբսիդավորումը:

102. **<u>Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռք բերում</u>** ծրագրով նախատեսվել է 97,869.0 հազ. դրամ՝ մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքներից ելնելով, Երևանի ենթակայության տակ գտնվող արտադպրոցական հաստատությունների գործունեության ապահովման նպատակով՝ երաժշտական գործիքների, վարչական և սպորտային գույքերի ձեռք բերման և տրամադրման համար: Ծրագիրը շարունակական է մինչև խնդրի ամբողջական կարգավորումը:

103. **<u>«Հակոբ Կոջոյան» կրթահամալիր ՊՈԱԿ–ում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 6,793.0 հազ. դրամ, 2023 թվականի հաստատված բյուջեի չափով, որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքի հիման վրա:

104. **<u>Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում</u>** ծրագրով նախատեսվել է 60,353.9 հազ. դրամ, 2023 հաստատված բյուջեի չափով, որպես սուբսիդիա՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված նպատակային հատկացումների հաշվին:

105. **<u>Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացմանը (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով 2024 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 9,248.1 հազ. դրամ՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

106. **<u>Նախադպրոցական հաստատությունների կառուցում և հիմնանորոգում</u>** ծրագրով նախատեսվել է 11,986.3 հազ. դրամ՝ Աջափնյակ վարչական շրջանի h.48 մանկապարտեզի բակի բարեկարգման նպատակով:

107. **<u>Դպրոցականների օլիմպիադաների և այլ միջոցառումների կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 74,000.0 հազ. դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել՝ մանկավարժների խրախուսման միջոցառումներ, առարկայական օլիմպիադաներ, հանրային առողջապահության միջոցառումներ, կիրառական ռազմագիտության միջոցառումներ, խորհրդակցական մարմինների ներուժի զարգացման ուղղված ծրագրեր, Գրքի և մայրենիի օրվան նվիրված միջոցառումներ, ինչպես նաև Երևանի դպրոցականների շրջագայություն «Երևան սիթի տուր» զբոսաշրջային երթուղային ծրագրի շրջանակում:

108. **<u>Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 37,662.2 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

109. **<u>Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 14,104.7 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

110. **<u>Կամավոր ատեստավորման համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որոկի բարձրացմանը (պատվիրակված լիազորություններ)</u>** ծրագրով նախատեսվել է 588,864.2 հազ. դրամ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

111. **<u>Հանրակրթական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում</u>** ծրագրով 2024 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 134,000.0 հազ. դրամ, որն ուղղվելու է Արաբկիր վարչական շրջանի թիվ 63 հիմնական դպրոցի բակի բարեկարգման, Մալաթիա-Սեբաստիա վարչական

շրջանի թիվ 176 հիմնական դպրոցի ֆիզդահլիճի հիմնանորոգման և Նուբարաշեն վարչական շրջանի թիվ 175 հիմնական դպրոցի ֆիզդահլիճի հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը:

112. **<u>Հարազատ չունեցող անձանց հուղարկավորության կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 15,769.0 հազ. դրամ, հաշվարկվել է՝ նախորդ տարիների փաստացի կատարված նմանատիպ ծախսերի հիման վրա:

113. **<u>Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանություն</u>** ծրագրով նախատեսվում է 40,609.6 հազ. դրամ, 2023 թվականի ճշտված բյուջեի ցուցանիշից 36,109.6 հազ.դրամով ավել: Ծրագիրը նախատեսվում է քաղաքային, մշակութային միջոցառումներում կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների ներգրավվման համար, ինչպես նաև վարչական շրջաններում խնամակալության և հոգաբարձության անդամների համար միասնական պրակտիկայի ձևավորման համար վերապատրաստումների կազմակերպման նպատակով տարածքների վարձակալության, ինչպես նաև հատուկ նպատակային նյութերի ձեռքբերման համար:

114. **<u>Մշակութային և կրթական միջոցառումներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար</u>** ծրագրով նախատեսվում է 3,300.0 հազ. դրամ, մշակութային և կրթական միջոցառումների կազմակերպում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար, մասնավորապես, «Ընտանիքի միջազգային օրվան» նվիրված միջոցառում խնամատար ընտանիքներում գտնվող երեխաների համար, երեխաների այցելություն մշակութային և ուսուցողական վայրեր՝ հոգաբարձուների ընտանիքներում գտնվող շուրջ 30 երեխայի համար, երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մշակութային և կրթական միջոցառումների կազմակերպում շուրջ 100 երեխայի համար, Ամանորին նվիրված մշակութային և կրթական միջոցառումներում երեխաների ներգրավում՝ 1700 երեխա:

115. **<u>Երեխաներին աջակցման նպատակով հատուկ սենյակների ստեղծում Երևան քաղաքի վարչական շրջաններում</u>** ծրագրով նախատեսվում է 5,800.0 հազ. դրամ, երեխայի վերաբերյալ հարցերի քննարկման ժամանակ

օրենսդրությամբ ամրագրված երեխային լսելու իրավունքի իրացման համար՝ Երևան քաղաքի 2 վարչական շրջանում համապատասխան կահավորմամբ սենյակների ստեղծման և փորձարկման նպատակով:

116. <u>Հանրակրթական դպրոցներում երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացում</u> ծրագրով նախատեսվում է 500.0 հազ. դրամ, ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական դպրոցներում երեխաների իրավունքների իրազեկվածության բարձրացմանն ուղղված ինտերակտիվ բնույթի ներկայացումների ձեռքբերման և թեմատիկ զրույցների անցկացման նպատակով մասնագետների ներգրավման նպատակով:

117. <u>Երևան քաղաքում երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում ներդրված նոր համակարգի շարունակական զարգացում՝ արդյունավետ կառավարման նպատակով</u> ծրագրով նախատեսվել է 5,000.0 հազ. դրամ, վարչական շրջանների համապատասխան բաժինների մասնագետների համար մշակված մոդուլին համապատասխան շարունակական վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ նեղ մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման նպատակով:

118. <u>Երևան համայնքի բնակիչների կենսամակարդակի բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի իրականացում</u> ծրագրով նախատեսվել է 126,624.5 հազ. դրամ, 2023 թվականի 120,380.0 հազ. դրամի դիմաց, տեղական սոցիալական ծրագրերի իրականացման, ընտանիքների համար տոնական և հիշատակի օրերին միջոցառումների իրականացման, էքսկուրսիաների կազմակերպման, ինչպես նաև այլ նպատակային և թիրախային սոցիալական ծրագրերի համար, այդ թվում համապատասխան մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքում՝ դպրոցական երեխաներ ունեցող ընտանիքներին լրակազմով պայուսակների տրամադրում, բազմազավակ ընտանիքներին՝ տնտեսական ապրանքներով և հիգիենայի պարագաներով փաթեթների տրամադրում:

119. <u>Հասարակական կազմակերպություններին աջակցություն</u> ծրագրով նախատեսվել է 42,480.0 հազ. դրամ՝ տարբեր սոցիալական

ուղղվածություն ունեցող հասարակական կազմակերպություններին անդամակցելու նպատակով:

120. **Տարբեր սոցիալական խմբերի համար Երևան համայնքում որակյալ սոցիալական ծառայությունների կազմակերպում** ծրագրով նախատեսվել է 29,224.0 հազ. դրամ: Ծրագիրը իր մեջ ներառում է սոցիալական աջակցություն և ներառական կրթության կարիք ունեցող երեխաների աջակցություն և կարիքների գնահատման արդյունքում սոցիալական ծառայությունների մատուցում:

121. **Բազմազավակ, երիտասարդ, և այլ խմբերին պատկանող ընտանիքներին աջակցություն** ծրագրով նախատեսվել է 114,548.5 հազ. դրամ՝ մասնագետների կողմից կարիքի գնահատման արդյունքում բազմազավակ ընտանիքներին աջակցության, այդ թվում՝ սննդի և հիգիենայի պարագաների փաթեթների, կենցաղային տեխնիկայի և այլ անհրաժեշտ կահույքի ձեռքբերման և տրամադրման, բնակարանների մասնակի վերանորոգման և այլ ծրագրերի մշակման և իրականացման:

122. **Արտակարգ իրավիճակներում և նմանատիպ այլ դեպքերում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց և ընտանիքներին աջակցություն** ծրագրով նախատեսվել է 20,000.0 հազ. դրամ: Ծրագիրն իր մեջ ներառում է տարբեր աջակցության միավորներ, այդ թվում՝ կենցաղային, սննդային փաթեթների ու նպատակային նյութերի ձեռքբերման և ընթացիկ վերանորոգումների տեսքով:

123. **Երևան քաղաքի սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ** ծրագրով նախատեսվել է 19,000.0 հազար դրամ, համապատասխան թիրախային խմբին Երևան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով, այդ թվում՝ ՀՀ և ԱՀ պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված /մահացած/, ինչպես նաև հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների, ինչպես նաև հայրենական մեծ

պատերազմի մասնակիցների և նրանց հավասարեցված անձանց ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանն աջակցում՝ բնակարանների վերանորոգում և գույքի ձեռքբերում, պետական բարձրագույն և նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (պետական հավատարմագրում ունեցող մասնագիտությունների գծով) սովորող քաղաքի սոցիալապես անապահով ընտանիքների անդամների ուսման վարձի մասնակի հատուցում, տարերարային և տեխնածին վտանգով պայմանավորված աղետների ու տնտեսական ցնցումների դեպքում բնակչությանն անհետաձգելի օգնության տրամադրում և գույքի ձեռբերում և այլ անհետաձգելի սոցիալական լուծում պահանջող խնդիրների լուծում:

124. **<u>Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքների համար հուղարկավորության կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 7,873.0 հազար դրամ:

125. **<u>Երևան քաղաքում համայնքային սոցիալական ծառայությունների ներդնում և իրականացում</u>** ծրագրով նախատեսվել է 7,000.0 հազար դրամ, սոցիալական ծառայությունների տրամադրման համար աշխատանքների իրականացում՝ ծառայությունների կազմակերպման նպատակով ուսումնասիրություն (իրավական, ֆինանսական, գույքային և այլ հիմքերի վերաբերյալ):

126. **<u>Սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին կայուն եկամուտ ապահովելու նպատակով զբաղվածության ծրագրերի կազմակերպում</u>** ծրագրով նախատեսվել է 11,000.0 հազար դրամ, սոցիալական ծրագրեր՝ ուղղված նոր մասնագիտությունների ձեռքբերմանը և աշխատանք գտնելու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև կիրականացվի զբաղվածության ծրագրերի կազմակերպում և համապատասխան աշխատանքային գործիքների տրամադրում:

127. **<u>Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում (պատվիրակված</u>**

<u>լիազորություններ)</u> ծրագրով նախատեսվում է 666,792.0 հազ. դրամ՝ որպես պատվիրակված լիազորություն՝ ՀՀ 2024 թվականի պետական բյուջեի օրենքով նախատեսված ցուցանիշների հիման վրա:

128. **<u>Առողջության ապահովագրություն</u>** ծրագրով նախատեսվել է 1,095,720.0 հազ. դրամ: Յուրաքանչյուր աշխատակցի համար առողջության ապահովագրության փաթեթի սահմանաչափի (գումարի) գումարը նախատեսվում է սահմանել 57.0 հազ. դրամ: Առողջության ապահովագրության ծառայություններ են ձեռք բերվում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի, վարչական շրջանների աշխատակազմերի աշխատակիցների, շախմատի դպրոցների, մսուր-մանկապարտեզների աշխատակիցների, «Երևանտրանս» ՓԲԸ-ի աշխատակիցների, «ԳՇՊՇ» ՓԲԸ-ի սպասարկող անձնակազմի, Երևան քաղաքի թատրոնների և թանգարանների, գրադարանների աշխատակիցների համար, ինչպես նաև մարզադպրոցների, երաժշտական և արվեստի դպրոցների, ՄՊՍԿ-ների, մշակույթի կենտրոնների, «Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի, «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի, »Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի, «Երևան հիմնադրամ»-ի, «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի աշխատակիցներին:

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծով նախատեսվում է 278,452.7 հազ. դրամի չափով դեֆիցիտ (պակասուրդ): Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» ծրագրի շրջանակներում նախատեսվում է վարկի ստացում 648,888.9 հազ. դրամ, իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում պետական մասնակցությունից, պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի, այդ թվում՝ անավարտ շինարարական օբյեկտների մասնավորեցումից առաջացող միջոցներից համայնքի բյուջե մասհանումից մուտքեր՝ 500,000.0 հազ.դրամ, տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսվում է 1,141,363.8 հազ. դրամի չափով: Միաժամանակ, նախատեսվում է 11,800.0 հազ.

դրամն ուղղել «Երևանի քաղաքային նոր աղբավայր» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռքբերմանը, իսկ 2,000,000.0 հազ. դրամը՝ «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի ձեռքբերմանը:

Տարեսկզբի ազատ մնացորդը կանխատեսված ցուցանիշ է, որը կճշգրտվի 2023 թվականի բյուջետային տարվա ավարտից հետո:

Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագիծը՝ հաստատված ժամանակացույցի համաձայն, 2023 թվականի նոյեմբերի 9-ին ներկայացվել է Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի անդամներին, նոյեմբերի 16-ին հրավիրված նիստում տվել է իր դրական եզրակացությունը՝ 2023 թվականի նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 4-ը Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու համար: Հանրային քննարկման հրապարակայնությունը, մատչելիությունը և թափանցիկությունը ապահովելու նպատակով հանրային քննարկման մասնակցության հրավերը հրապարակվել է մամուլում և Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Միաժամանակ ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական http://www.e-draft.am կայքում, ինչպես նաև Երևան քաղաքի պաշտոնական կայքում հրապարակվել է Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծի էլեկտրոնային տարբերակը կից բացատրագիր-հիմնավորմամբ: 2023 թվականի դեկտեմբերի 1-ին Երևանի քաղաքապետարանում կազմակերպվել է Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագծի հանրային քննարկում՝ հանրային բաց լսումների եղանակով, որի վերաբերյալ կազմվել է համապատասխան ամփոփաթերթ: Երևանի քաղաքապետին կից գործող Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդի 2023 թվականի դեկտեմբերի 4-ին կայացած նիստում ամփոփվել են հանրային քննարկման արդյունքները: Նույն նիստում Երևան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհուրդը տվել է իր

դրական եզրակացությունը՝ Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագիծը Երևանի ավագանուն ներկայացնելու համար:

Այսպիսով, Երևան քաղաքի 2024 թվականի բյուջեի նախագիծը առաջարկվում է հաստատել.

1. *եկամուտների գծով՝ **124,639,373.4** հազ. դրամ,*
2. *ծախսերի գծով՝ **124,917,826.1** հազ. դրամ,*
3. *դեֆիցիտը՝ **278,452.7** հազ. դրամ:*

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ